

ՈՒՐՈՒՍԳԻՓ

ՈԳԻՆՅ ԵՒ ԸՆԹԱՑԻՑ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ



ՓԱՐԻՉ

Ի ԳՐԱՆՈՅԻ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

—  
1857



# ՈՒՐՈՒԱԳԻԾ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

---

Փարիզ, Տպագրութիւն Արմ. Ի Տպար. Վալտերի:  
Paris. Typ. Arménienne de Walder, r. Bonaparte, 44

ՈՒՐՈՒՍԱԳԻԾ

ՈԳԻՆՅ ԵՒ ԸՆԹԱՑԻՑ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ



Փ Ա Ր Ի Չ

Ի ԳՐԱՆՈՑԻ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

—  
1857

*Handwritten signature or note at the bottom of the page.*

Handwritten text in a decorative oval border, possibly a library stamp or title, including the word "LIBRARY".

U9 mel  

---

99

## ԱՆՉԿԱԻԷՏ ՀԱՐԱԶԱՏ ԻՄ

### ՅՈՎ ՀԱՆՆԷՍ

Մինչդեռ, դու աստուածապարգէս չըր-  
նաղ հանճարով ու հրաշայի վրձինովդ  
բնութեան հոյակապ տեսարանները կընը-  
կարէիր, եւ ես անոնց ճշգրտութեանն ու  
գեղեցկութեանը վրայ գմայլած կընայէի,  
խնդրեցիր ինձմէ որ ես այ բարոյական  
պատկեր մը նկարագրեմ, այս ինքն ի գիր  
անցընեմ Մխիթարեան միաբանութեան  
հոգին ու սկզբունքները, որոնցմէ բաժ-  
նուած լիալուս ալնչափ ուրախ էիր՝  
քսան տարուան փափաքդ վերջապէս կա-  
տարուած տեսնելով վրաս :

Խնդիրդ դժուարին էր, եղբայր, եւ իմ ան-  
յիշաջար բնաւորութեանս ու խաղաղասէր

զգածմանցս շատ հակառակ . սակայն բու  
արդարակորով մտածութեանդ, եռանդուն  
ազգասիրութեանդ, և այսբան ժամանակ  
իմ քաշածներուս վրայ ցուցուցած կարեկ-  
ցութեանդ սիրոյն համար պարտական էի  
չէ չըսել քեզի . և անա նրջափ որ կրցայ՝  
կատարեցի խնդիրքդ, այնպէս որ քեպար-  
տականութիւնս վճարեմ և քէ բնական  
զգածմանցս դեմ չգործեմ :

Ընդունե ուրեմն սիրով այս փոքրիկ  
գրուածքը , ոչ իբր գունագեղ նկարագիր  
կամ պատկեր մանրանկար, այլ միայն  
իբրեւ հարեւանցի բայց ճիշդ Ուրուագիծ.  
և երէ քեզ և ինձ սիրելի Ազգերնուս  
խրատ և օգուտ մը էլի ասոր ընթերց-  
մունքեն , ինչպէս որ կըլլուսամ , դուն ալ  
արժանապէս մխիթարուէ և ուրախացիր :

Եղբայր քո

ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԻՒՆ :

Ի Փարիզ, 5 Մայիսի 1857 :





Աշխարհիս երեսը որչափ բարի,  
սուրբ, օգտակար, գեղեցիկ եւ գո-  
վելի բան որ կայ՝ երբ չկարենային  
մարդիկ չարի գործածել, իրաւցընե-  
այս թշուառ աշխարհս երջանկաւե-  
ղրախոս մը կը դառնար : Բայց Ա.ս-  
տուած իր անընեղի դասասանովն  
ու նախախնամութեամբը պատշաճ  
չէ տեսեր այսպիսի սահման մը դնել  
մարդուս կամքին ազատութեանը .  
այլ թող տուեր է որ մարդիկ երբ ու-  
զեն՝ զբարին անգամ չարի դարձը-

նեն, եւ ի չարեաց բարիք հանելը  
իւր անհուն ողորմութեանն ու ամե-  
նակարող զօրութեանը պահեր է :  
Ուստի եւ անժխսելի ճշմարտութիւն  
մըն է փիլիսոփայից մեկուն ըսածը  
թէ « Սշխարհիս մեջ զսնուած աղե-  
« կութիւնները թերեւս կարելի ըլ-  
« լայ համրել. բայց այն աղեկու-  
« թիւններուն ի չարն զործածուիլը  
« զիր անցունելու համար բոլոր աշ-  
« խարհիս թուղթը չբաւեր » :

Չեինք ուզեր որ այս ճշմարտ-  
ութեան յայտնի ապացոյց ըլլար մեզի  
նաեւ այն պատկառելի Միաբա-  
նութիւնը՝ որոյ անդամ եղած ենք  
զրեթէ երեսուն տարի, անոր ոգւոյն  
ու ընթացքին աղեկութիւնները ան-  
ձամբ վայելէր ենք, եւ անոր լաւու-

քեանն ու յառաջադիմութեան՝ գեթ  
մեր սկարութեան ընկածին չափ՝  
աշխատեալ ենք: Չեինք ուզեր կրսեմ  
ցուցընել չգիտցողներուն քե Մխի-  
թարեան միաբանութեան ոգին ու  
ընթացքն ալ, որ իր հիմնադրին  
մտացը մեջ գովելի էին, ինչպէս քիչ  
ասենեկն աւուրեցան ու քիւրեցան,  
եւ հետ գհետե ալնչափ խոսորեցան  
իրենց սկզբնական նպատակէն որ  
ազգիս Հայոց օգտին համար հիմ-  
նուած միաբանութիւնը վնասակար  
ըրին անոր:

Չեինք ուզեր այս բաներս նը-  
կարագրելու ելլել՝ իբրեւ սոսկական  
անձ. վասն զի մեզի համար հիմ-  
նական օրէնք եղած է մտածելը քե  
բարին ու չարը զանազանել, ուզո-

դին ու կրցողին համար անհրաժեշտ  
պարտք խոսորիլ ի չարէն եւ առնել  
գլխին , խնդրել գիտադադուքիւն  
եւ երթալ գնէտ նորա . եւ թէ մաս-  
նաւորէն ընդհանուրին պէտք չէ հե-  
տեւանք հանել , այլ մեղուին օրի-  
նակին նմանելով՝ մեղորը առնուլ ,  
ու թոյնը մեկդի ձգել . երանելի հին  
ձգնաւորաց մեկուսն պէս՝ ուրիշնե-  
րուն վրայ պարսաւելի գործ մը տե-  
սած ասեննիս « Դու մի առնէր ,  
Ս. դաթոն » ըսել մենք մեզի ու անց-  
նիլ երթալ . եւ Պօղոս առաքելոյն  
վարուցն ու խրատուն հետեւելով՝ եթէ  
կարելի է ընդ ամենայնի ամենայն  
ըլլալ որ զամենեսեան շահիմք ի  
Քրիստոս , ու մեկուսն ընկածը տեսած  
ասեննիս անգամ՝ « Դու զի դատիս »

գայլոյ ծառայ... իւրում տեան  
կայ կամ անկանի » ըսել ու լռել :  
Մէկ խօսքով, իբրեւ սոսկական  
անձ՝ աչքերնուս առջեւ ունենայով  
աշխարհիս անցաւորութիւնն ու մեր  
պանդիսութիւնը, եւ ի բուն հայրե-  
նիս մեր՝ այսինքն ի յերկինս դիմելու  
պարտքը, հարկ կը համարէինք մեր  
ընթացքին ու ճամբուն շտկութեանը  
միայն նայիլ, ուրիշներուն չխառ-  
նուիլ :

Սակայն աւանդ. սոսկական անձ  
ըլլալու իրաւունքնիս շատոնց կոր-  
սընցուցեր ենք մեր եկեղեցական  
վիճակովը, եւ եղեր ենք ազգային  
անձ՝ սպասաւոր եկեղեցւոյ. հարկ է  
որ ազգին եւ եկեղեցւոյ օգուտն ու  
վնասը քարոզենք իմացընենք ի դէպ

ժամանակի: Եւ որովհետեւ կրօնա-  
 ւորական միաբանութեան մը նեղի-  
 նակութիւնը մեծ է՝ իբրեւ սուրբ  
 Աւետարանին պատուերներն ու խը-  
 բանները հասարակ քրիստոնէիցմէ  
 աւելի ճիշդ պահող, եւ հաստատու  
 օրէնքներով ու կանոններով վարուող  
 ընկերութիւն մարդկան, եւ մենք  
 այնպիսի միաբանութեան երկար  
 ասէն աշակերտ եւ անդամ գտնուե-  
 ինք, հարկ է որ անոր աղեկութիւն-  
 ներն ու պակասութիւնները փոքր  
 ի շահէ նշանակենք: Մենք կանց-  
 նինք կերթանք, միաբանութիւնը  
 բնականապէս մշտնջենաւորելու  
 ճամբուն մեզ է, հարկ է որ ոչ մի-  
 այն ժամանակակից մարդկանց  
 ցուցընենք, այլ եւ մեր ապագայից

աւանդէնք մեր ըրած գլխաւոր դի-  
տողութիւնները :

Ասով ալ կիմացուի թէ մտքերնիս  
այն չէ ամենեւին որ Միսիքարեան  
միաբանութեան բուն նպատակին  
աղէկութիւնները վար զարները .  
այդպիսի անիրաւութենէ հեռու ենք  
ու միշտ հեռու պիտի մնանք Ասու-  
ծով . հապա կուգենք բարւոյն բարի  
ըսել եւ չարին չար . եւ ազատ մնալ  
այն սոսկալի վայէն որ կուտայ Աս-  
տուած ասոր հակառակն ընողին .  
« Վնայ որ ասէն զչարն բարի եւ  
« զբարին չար . վնայ որ ասէն զլոյսն  
« խաւար եւ զխաւարն լոյս . վնայ որ  
« ասէն զդառնն քաղցր եւ զքաղցրն  
« դառն : » Թող որ պակասաւոր  
բաներուն անգամ գովելի մասը

դուրս հանելը այնչափ հաճոյ գիտէնք  
Ասուծոյ որ այս մտքով կը հասկը-  
նանք մարգարէին ձեռքովն ըսածը .  
« Եթէ հանիցես զպատուականն յա-  
« նարգէն , իբրեւ զբերան իմ եղի-  
« ցիս : »

Այս կերպով յուսանք թէ մեր փո-  
քրիկ գրուածքին պտուղը կըլլայ օ-  
գուտ ազգի եւ շինութիւն հաւատա-  
ցելոց , բոլորովին հակառակ *Միսի-  
թարեան Վեկեկոյ* ըսուած իսա-  
լերէն պարսաւագրքին , եւ անոր դէմ  
հրատարակուած հայերէն *Պատաս-  
խանոցն* , որոց պտուղն եղաւ ազ-  
գային խռովութիւն , մասնաւորաց  
հալածանք , անյուր անիրաւութիւնք  
եւ անհաշտ թշնամութիւնք :



## Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ ՈԳԻ ՄԻԻԹԱՐԵԱՆ


ՄԻԱԲԱՆ ՈՒԹԵԱՆ.

---

Եթէ որ եւ իցէ գործոյ, եւ մանա-  
ւանդ որ եւ իցէ կանոնադրութեան  
եւ ընկերակցութեան յարգն ու օգ-  
տակարութիւնը իր նպատակէն կը-  
ջափուի, միթէ Միսիթարայ եւ իւր  
միաբանութեանը նպատակէն աւե-  
լի ազնիւ՝ գերազանց եւ օգտակա-  
րան կրնա՞ր ըլլալ: Ի՞նչ էր իր սկըզբ-  
նական նպատակը, եթէ ոչ լուսա-

ԼՈՐՈՒՔԻՆ ազգիս Հայոց՝ մՏԱՆՈՐ ԵՒ  
բարոյական ու կրօնական կրթու-  
թեամբ : Շատ կըսիսայի ով որ կը-  
կարծէ թէ Միսիբարայ նպատակն էր  
ազգերնիս կարողիկ ընել, ժռան-  
կացընել, լատինացընել. եթէ այդ  
ըլլար, նոր միաբանութիւն մը կազ-  
մել ինչ պէտք էր այնքան նեղու-  
թեամբ եւ հալածանօք. ոչ ապարէն  
աւելի դիւրին էր որ Փրովականսայի  
ուրբանեան դպրոցը մտնէր ի Հոռովմ,  
եւ կամ լատին ճիզվիթներուն մէկ  
վանքը, եւ յետոյ երբար Հայաստան  
ժռանկութիւն քարոզէր, եւ ազգիս  
դեմ ասելութիւն ու քշնամութիւն,  
ինչպէս որ իր ասէնն ալ կային  
ընողներ : Այն չէր իր նպատակը, ոչ  
երբէք : Ընդ հակառակն՝ իր բուն

դիտարարութիւնն եր ազգերնուս մեջ  
արդէն *բաղտնականութիւնն* ու Փրոփա-  
կանսայի ազգասեաց աշակերտնե-  
րուն ձեռքովը մտած կարողիկու-  
րիւնը՝ պատականութիւնը՝ վերցը-  
նել, ինչպէս որ լաւ հասկըցած են  
ամեն ժամանակ՝ ոչ միայն Մխի-  
բարայ եւ Մխիբարեանց ոգին ու  
ընթացքը դիտող լատինահայր, այլ  
եւ նոյն իսկ Մխիբարեանը, կամ  
անոնց մեջէն շատերն ու ազգասեր-  
ները : Այն վախճանին հասնելու  
համար ինչ պէտքեր ընել . — ազգին  
աչքը եւ միտքը բանալ գիտութեամբ՝  
որպէս զի հասկընայ քե իր պատմու-  
թիւնն ինչ է, իր լեզուն որն է, իր  
դաւանութիւնը ուղիղ է, իր էկեղե-  
ցին ուղղափառ է եւ մէկ խօսքով՝



ոչ ազգ մը սեպուէլու համար իր ազգութիւնն ուրանալու կարօտ է, եւ ոչ ուղղափառ ըլլալու համար իր էկեղեցիէն ու առաջնորդներէն հեռանալու ապստամբելու է :

Կրօնաւորական միաբանակէաց կեանքը այն ասէններն այ մեծապէս յարգի եւ մեր ազգին մէջ, ինչպէս նաեւ այլ քրիստոնէայ ազգաց մէջ, քեպէտ է ժողովրդեան պիտոյիցը անմիջական էլ գործունէայ ծառայութիւն էլ օգնութիւն ընելէն հեռու մնացած : Միսիբար մտածեց որ ազգին այն բարեպաշտական հոգին գործիք առնու անոր կրթութեանն ու լուսաւորութեանը համար : Ուզեց որ ազգերնիս օտար ազգերէն չսպասէ իր լուսաւորու-

թիւնը , հապա իր մեջ գտնուած  
հանճարներն ու շնորհքները վայելէ .  
ուստի ամենայն ջանք ըրաւ որ իր  
վախճանին յարմար հանճար ու  
յօժարութիւն ունեցող անձինք միա-  
բանին հետն ու մեր ազգին վերանո-  
րոգմանը աշխատին հոգւով եւ  
մարմնով : Իրենք ուսեալ ըլլան որ  
գայլս ալ ուսուցանեն . իրենք բն-  
րեկիրք ըլլան՝ որ գուրիշներն ալ  
դիւրաւ կրթեն . իրենք ազգասէր  
ըլլան որ ուրիշներուն սրտին մեջ ալ  
ազգասիրութեան մարմնած կրակը  
սորեն արծարծեն ու բորբոքեն :

Ազգերնիս *իբրև Հայ՝* կարօս եր  
իր լեզուն սովբելու , պահպանելու ,  
իր պատմութիւնը ճանչնալու , իր հին  
եւ նոր պարծանքները հասկընալու

Եւ սիրս առնելու . եւ *իբրեւ բարե-  
պաշտ քրիստոնէայ՝* իր սուրբ հա-  
ւասքը հաստատուն եւ լուսաւոր պա-  
հելու , եւ սիրով՝ խաղաղութեամբ  
ու բարեգործութեամբ քրիստոնեու-  
թիւնը յայտնի ընելու : Միսիրարայ  
մտքին մեջ այս երկու նպատակները  
մեկ էին , ու ասոնց հասնելու հնարք-  
ներունն ձեռք գտնուաւ :

Հայաստանի ծխեալ աներակներ-  
ունն մեջ պտտած ասէնը՝ գրեթէ  
միայն « Եկ գկնի իմ » ըսելով  
մեկունն մեկային , ընտիր ընտիր հայ-  
կազն ընկերակիցներ ժողովեց , իր  
հոգին անոնց ալ հաղորդեց , ըրաւ  
գանունք իրաւցընէ աշխարհուրաց  
մարդիկ , եւ Քրիստոսի սուրբ առա-  
քելոց հետեւող բարոգիչներ : Ասոնք

իրենց ասուած աշնորհքանքարները  
մեկսեղ բերած, անշահասէր հոգւով  
պիտի աշխասէին լոյս ըլլալ խա-  
ւարելոց, միսիրարիչ սառապելոց,  
աղ անհամելոց, խրատիչ սարա-  
կուսելոց, հրահանգիչ տղայոց, սփո-  
փիչ ծերոց, եւ առ հասարակ վերա-  
նորոգիչ բովանդակ ազգիս Հայոց :

Այս էր անա Միսիրաբեան նո-  
րածին միաբանութեանը նախնա-  
կան նպատակը, եւ ասոր պիտի դի-  
մէր մեծ եռանդով եւ սաստիկ արա-  
գութեամբ :

Այսպիսի հոգւով վառուած միա-  
բանութեան ընթացքը պէտք էր որ  
հսկայաքայլ յառաջադիմութիւնը ը-  
լար. ուսի եւ Միսիրաբայ ու իր  
միաբանակցաց քիչ ժամանակի

մեջ մեր ազգին ըրած աղեկաւթիւն-  
ներն իրաւցընէ գարմանայի պիտի  
ըլլային : Ոչ քաշած նեղութիւնները  
աչքերնին պիտի վախցընէին ուրիշ-  
ներու բարիք ընելէն, ոչ նամբորդու-  
թեան դժուարութիւնները պիտի ար-  
գիլէին գիրենք Հայաստանի գեղերն  
ու քաղաքները պսրսելով ապաշ-  
խարութիւն՝ սեր եւ գիտութիւն քա-  
րոզելէն, ոչ աղքատութիւնը պիտի  
խափանէր գիրենք՝ ողորմութեամբ  
սպած հարկաւոր գրքերնին ազգին  
աղքատներուն ձրի բաժնելէն :

Հայը իրենց համար արդէն ուղ-  
ղափառ քրիստոնէայ էր, վասն զի  
իրենք ալ Հայ էին եւ ուղղափառ .  
ուստի եւ ազգային եկեղեցիէն հե-  
ռանալը մտքերնէն անգամ չէր անց-



ներ : Յոյնն ու լասիկն ալ չարափառ  
չէին իրենց համար , վասն զի լամ-  
բրոնեան խաղաղասէր ու լուսաւոր  
հոգւոյն պիտի հետեւէին . անով իրենց  
պարտք պիտի ճանչնային ազգին մե-  
ջէն երկնպառակութիւնները ջնջելու  
վերցընելու աշխատիւ բանիւ եւ օրի-  
նակաւ , եւ կուսակցութեան հոգիէն  
իբրեւ ի ժանսախտ զգուշանալ : Ի-  
րենց ամեն վարմունքին մեջ յայտնի  
պիտի երեւնար որ միաբանութիւնն  
ազգին համար եղած կը ճանչնային ,  
եւ ոչ թէ ազգը իրենց միաբանու-  
թեանը համար :

Այսպիսի նպատակով սկսաւ ահա  
Միսիբարեան միաբանութիւնը ա-  
ռաջ երթալ քանի որ դեռ ազգին մեջն  
էր . եւ ասոր մնացորդներն էն այն

աղկուլթիւններն որ սկզբնական  
ոգւոյն փոխուելէն եւ առաջին ըն-  
թացքին ծուելէն ետքն այ մինչեւ մեր  
օրերը ասեն ասեն երեւցեր են՝ երբ ոչ  
բոլոր միաբանութեան՝ գէթ մաս-  
նաւոր միաբաններու վրայ, երբ ոչ  
ամեն բանի՝ գէթ բանի մը մեծա-  
մեծ գործողութեանց մեջ :

Բայց Տեսներք թէ այն սկզբնա-  
կան ոգին ինչէն փոխուեցաւ, եւ  
փոխուելուն հետեւանքը ինչ եղաւ :  
Տեսներք թէ այն ազգասիրական ըն-  
կերութեան յսակ եւ կենդանարար  
աղբիւրը՝ որով Հայաստանեայց  
ազգն ու եկեղեցին պիտի ոռոգուէին  
մշտնջենաւորապէս, եւ բիւրաբեղուն  
պտղաբերութեամբ պիտի ուռնա-  
նային, ինչէն ու ինչ կերպով պոսո-

րեցաւ, եւ բարեմիտ ազգիս հոգե-  
ւոր սննդեանն ու նիւթական զար-  
գացմանն անգամ մեծամեծ վնաս-  
ներ բերաւ :



Բ.

ՅԱԴԱՓՈՒՈՒԹԻՒՆ ՈԳԻՈՅ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

---

Միսիթարայ եւ իր առաջին աշակերտաց մտքին մեջ հաստատուն սկզբունք մըն էր Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնը, անոր վարդապետութեանց անարատութիւնը, եւ բազմադարեան ինքնիշխանութեանն իրաւունքը: Կրճանջնային ու կրչարգէին լատին միսիոնարներուն՝ այս ինքն քարոզիչնե-

րուն հմտութիւնը, կըմեծարեին (գեթ  
առ երեսս) Փրօփականսայի լասի-  
նահայ աշակերտներուն լեզուագի-  
տութիւնն ու ուսումնականութիւնը.  
Բայց մտքերնէն անգամ չէր անցներ  
որ իրենք ալ անոնց կարգը մտնեն :  
Ընդ հակառակն՝ անոնցմէ հեռու  
մնայու, եւ ազգերնու ազգային  
հոգին անոնց տուած վնասներէն  
ազատ պահելու համար եղած էին  
իրենք :

Բայց շատ չանցաւ, մասնաւորաց  
նախանձն ու թշնամութիւնը դար-  
ձեալ խափանեց հասարակաց բա-  
րին, եւ ստիպեց զՄխիթար իրեննե-  
րովը հանդերձ օտար երկիր՝ օտար  
ազգաց մեջ փախչելու, եւ մեր ազ-  
գիս ուրիշ շատ գաղթականներուն

պէս ազգային հոգին կորսընցընելով  
օտարաց յարելու դաւանանքով ու սո-  
վորութիւններով : Չնեղանան Մխի-  
թարեանք այս խօսքիս. չըսեն թէ  
Մխիթարեան մը չկայ որ իր ազ-  
գային հոգին կորսընցուցած ու ազ-  
գութիւնը ուրացած ըլլայ : Թող յի-  
շեն գոնէ այն բազմաց առջեւն  
եղած անմոռանալի վեհը Սուրբ  
Ղազարու վանքին մէջ, յորում այսօ-  
րուան օրս այժմու մեծաւորին հա-  
ւասարիմ խորհրդական ու իրենց  
ձեռքը եղած *ազգային* վարժարա-  
նի մը վերասեսչութեամբը պա-  
սուեայ անձ մը յանդգնեցաւ ըսելու  
եւ պնդելու թէ « Շաս կըցաւիմ որ  
« Աստուած գիս Հայ սեղծեր է... »  
Թող յիշեն որ գրքուկիս հեղինակն

այ չղիմանալով այնպիսի սարսա-  
փելի հայհոյութեան՝ հարկադրեցաւ  
մեկէն պատասխանելու թէ « Այդ  
« ցաւերնիդ բոլորովին անիրաւ է,  
« Վերապատելի Հայր. վասն զի  
« թէ որ հրամանքդ գիտութեամբ եւ  
« ուրիշ կատարելութիւններով բան  
« մըն ես այսօր եւրոպայի մէջ, ո՞չ  
« ապաքէն Հայ ըլլալովդ է. ապա  
« թէ ոչ, եթէ իսալացի, գաղղիացի  
« կամ անգղիացի ծնած ըլլայիր,  
« ինչպէս որ կը փափաքիս, յայտնի  
« բան է որ իբրեւ կաթիլ մի ի ծո-  
« վու անյայտ եւ աներեւոյթ կըլ-  
« լայիր անոնց իմաստուններուն  
« մէջ: » Թող յիշեն կըսեմ այն  
խօսակցութիւնը, եւ վկայեն թէ  
այսպիսի Միսիթարեանք եղեր են

ասենով, կան նաեւ հիմա, եւ պիտի  
ըլլան ասկեց ետքն ալ՝ եթէ ընթացք-  
նին չփոխեն :

Առջի բերան *բերեսու* կարելի չէր  
գուշակել, թէ այն յարումը նրչափ  
հակառակ էր Միաբանութեան  
սկզբնական հոգւոյն, եւ նրչափ կը-  
ծուեանով միաբանութիւնը իր բուն  
նպատակէն, եւ ազգերնուս օգտա-  
կար ըլլալու տեղը նրչափ վնասա-  
կար կըլլար : Կարծեց Միսիթար թէ  
ազգերնիս Լասինացւոց մօտեցնելը,  
հռովմեական կաթոլիկ ընելը կամ  
գէթերեւցընելը՝ հարկաւոր եւ օգտա-  
կար բան մըն է, եւ վնասակար հետե-  
ւանք մը չունենար՝ թէ որ լեզուն ու  
սովորութիւնները հայկական պա-  
հուին : Բայց փորձն ու ժամանակը,



Եւ ազգիս մեջ ետքէն պատահած փոփոխութիւնները յայտնի ըրին որ Մխիթարայ կարծիքը դժբաղդաբար սխալ էր, եւ իր բռնած ճամբան՝ գոնե յէտ ժամանակաց՝ մեծամեծ վնասներու պատճառ պիտի ըլլար ազգին :

Մխիթարայ աշակերտները, — քերէւս ինքն ալ իր առաջնորդութեան վերջի երեսուն տարւոյն մեջ, — երբոր սկսան անդադար ամբաստանութիւն չարչարութիւն Լասինացւոց իբրէն ոչ բաւական կարօտիկ, ոչ բաւական նախանձայոյց հռովմեական, հասկըցան իրենց սխալմունքը . հասկըցան թէ ծուռ ճամբայ է բռնածնին . իմացան որ ազգին ասելի պիտի ըլլան, եւ Քռանկաց

անհաճոյ եւ կասկածեյի. բայց կար-  
ծեին թէ կամաց կամաց պիտի կա-  
րենան հասկըցընել Հոովմայ արո-  
ւոյն եւ անոր նախանձայոյց քա-  
րոզիչներուն թէ կրօնն ուրիշ բան է  
եւ ազգութիւնն ուրիշ բան, եւ թէ  
իրենք ալ կրնան հայազգի մնալով  
հանդերձ լաւ կաթուիկ ըլլալ, կամ  
թէ ջերմեռանդ կաթուիկ ալ ըլլա-  
լով՝ հայազգի ու հայասեր մնալ:  
Կարծեին թէ պիտի կարենան իրենց  
միաբանութիւնը, եւ իրենց հետ մեկ-  
տեղ ազգերնիս այնպիսի կեղակարծ  
ու վճանգաւոր դրից մեջ գրեթէ հրա-  
շալի կերպով մը հաւասարակշիռ  
պահել, այնպէս որ ոչ հայութիւննին  
կորսընցընեն եւ ոչ Լասինացւոց աչ-  
քին կասկածեյի ու հերձուածող

Երեւնան : Յայտնի է թէ յայսմ ալ մեծապէս սխալեցան : Չիրցան նախասէս ըլլալ որ Հռովմայ աթոռոյն տիրապետական ոգին իրենց այնպիսի կիսկասարկաթուղիկութեամբը ոչ երբէք գոհ պիտի ըլլար . կասարեալ հպատակութիւն կը պահանջէր իր հրամաններուն ու կարգադրութեանցը, որով եւ կասարեալ ազգութեանցը :

Ուշ հասկըցան Միսիթարեանք թէ խաբուէր են իրենց յուսոյն մեջ . եւ այնչափ ուշ որ բանը բանէն անցեր էր . ազգն ալ որ առաջ երկու *կուսակցութիւն* միայն բաժնուած կըրնար համարուիլ արեւելք՝ Երեսուն տարիէ մը ի վեր երկու ժողովուրդ եւ գրեթէ երկու ազգ գտնուեցաւ :

Իսկ թէ նրչափ նեղութեանց եւ  
սառապանաց մեջ ընկան Մխիթա-  
րեանք, եւ նրչափ ապացոյցներու  
կարօտ եղան՝ մինչեւ որ հասկըցան  
թէ իրենց ոգւոյն փոխուիլը եւ նպա-  
սակին այլայլիլը գեշ բան եղաւ,  
քանի մը օրինակով հաստատենք :

Ա. Ամեն մարդ գիտէ թէ Մխի-  
թարայ աբբանօր ասենք լասինամոյ  
եւ ազգասեաց Հայերէն ոմանք մեր  
նախնեաց լեզուն ինչպէս արեւ  
ապականեր էին՝ լասին լեզուի կա-  
նոններուն յարմարցընելով : Այսդա-  
սապարտելի գործողութիւնը պարզ  
զգիտութենէ չէր գար, հապա մա-  
նաւանդ մոլեկան կաթոյիկութենէ.  
վասն զի մտքերնին դրած էին թէ  
Հայոց դաւանանքը այն ասէն միայն

կրնայ ազատիլ հերձուածողութեան  
ու հերէսիկոսութեան կարծիքներէ՝  
երբոր լատիններէնին ճիշդ քարգմա-  
նութեամբը (իրենց խելքովը) գրուին  
ու բացատրուին հռովմեական դա-  
ւանանքին խօսքերը: Ուստի մեր ժա-  
մակարգութեան գրքերուն շատ մը  
անմեղ եւ ուղիղ գրուցուածքները  
յանդուզն սգիտութեամբ փոփոխե-  
լով աւելեւն ու Փրոփականիսայի  
սպարանը սպելով հրատարակելէն  
էտքը, ամեն տեղ կըքարոզէին թէ ով  
որ Յակոբ Հոյովին անճոռնի քերա-  
կանութեանը եւ Վարդան Յունա-  
նեանին վայրենի շարադրութեանը  
չհետեւիր, կատարեալ ուղղափառ  
չէ, լաւ կարուիկ չէ, փրկութեան  
ճամբէն դուրս է... Արդ Մխիթար

աբբան չէր կրնար չգիտնալ այսկար-  
ծիքին ու վարդապետութեան այ-  
լանդակութիւնը, վնասակարութիւ-  
նը, եւ գարշելի հետեւանքները. բայց  
ինքզինքը ջերմեռանդ կաթոյիկ եւ  
Փրոփականսային երկիւղած պաշ-  
տօնեայ երեւցընելը մէյմը հարկ հա-  
մարած ըլլալուն, իրեն խղճմտան-  
քին ալ դէմ՝ այն նորահնար շարա-  
դրութեան կրհեսեւեր ու իրենները  
կրհեսեւցըներ: Կրհարցընեն եղեր  
աշակերտներն իրեն թէ « Գերյար-  
« գելի, մինչեւ երբ այս անտեղի  
« սկզբունքին եւ այլանդակ ոճին  
« պիտի հետեւինք: » Մխիթար կը-  
պատասխանէ եղեր հառաջելով՝  
« Ո՛հ, որդեակք, ինչ ըսեմ. դուք ալ  
« կըսեսներ որ ես այդ ոճին թշնամի

« Էմ, ու ասոր դեմ՝ նոր քերական-  
« նութիւն եւ Հայկազեան լեզուի  
« մեծ բառարան կը պատրաստեմ՝  
« նախնեաց գրքերուն հետեւելով.  
« Բայց առ այժմ ինչ ընենք. պէտք  
« է այսպէս գիտութեամբ եւ կամաւ  
« գեշ լեզուին հետեւինք որ իբրեւ  
« հերձուածող ջղատապարտունք  
« Հռոմէն, չքըշունք Խալիպայէն : »  
Քիչ ժամանակէն քերականութիւնն  
ու բառարանը հրատարակեց. եւ իր  
բաղդէն Հռոմի Փրոփականեան ար-  
ժանաւոր յաջորդներ ջունեցաւ այն  
ատենները Բարսեղին, Հոյովին, Յու-  
նանեանին, որ Մխիթարեանց գրքերն  
իբրեւ մոլորական գրուածքներ այ-  
րէին : Մեր օրերը միայն էլաւ՝ իր  
կրօնամոլութեամբը արեւելք ու

արեւմուտք բաւական անուն հանած  
գաղղիացի մը որ յանդգնեցաւ սպա-  
գրութեամբ ըսելու թէ Հայոց դաւա-  
նանքը ինչպէս որ պէտք է ուղղա-  
փառական ընելու համար՝ հարկ է  
հայերէն լեզուն ջնջել ու տեղը լատի-  
ներէնը մտցընել<sup>1</sup> . բայց քանի մը տա-  
րիէն իր մտածութեան յիմարութիւնը  
տեսնելով՝ ինքը սկսաւ հայերէն սով-  
րիլ ի վնաս ազգիս Հայոց :

Բ. Միսիքարայ ասէնէն եւ անկէց  
այ առաջ սկսեւ էին Լատինք եւ Լա-  
տինահայք միջին դարու Տփլիսի  
ճեմարանի ու շատ մը  
մեր ազգին ոգւոյն հակառակ սովո-

---

<sup>1</sup> Էօժէն Պոռէ քահանան՝ գաղղիարէն ի Փարիզ  
հրատարակուած կրօնամոլ օրագրի մը մէջ :



բուքիւններ՝ մտցընել Հայոց մեջ,  
ինչպէս էին Պարսէզ հոգեւոր, Քու-  
րասան աղօթից, Ակն հոգւոյ, Պաս-  
մուքիւն հոգեաց, եւ ասոնց նման  
անհամ անժուր գրուածոց մեջի  
շատ մը աղօթքներն ու պատկերը,  
վարդարանները, յիբանիաները,  
հանդերձները, եւ այլն եւ այլն :  
Միսիբարայ առաջին աշակերտները  
միշտ չէին կրնար սանձել իրենց  
սրմտութիւնը այսպիսի անելորդ եւ  
օտարոտի սովորութեանց դէմ . եւ  
Շնորհալոյն, Նարեկացւոյն, Լամ-  
բրոնացւոյն, Փառնեցւոյն եւ ուրիշ X  
ազգային վարդապետաց վսեմ ու հո-  
գելից աղօթքներուն գերազանցու-  
թիւնը կրնուչակէին : — Ամբասա-  
նուէցան ի Հռովմ իբրեւ հայասեր,

ուսի եւ մոյորամիս, եւ կաթուի-  
կուքեան թշնամի մարդիկ: Պիտեն  
Մխիթարեանք այս պատճառաւ Ան-  
քեպցի Հ. Պեորգին եւ Մխիթարայ  
քաշածները:

Պ. Լասինահայք եւ Լասինացիք  
չէին ուզէր ամենեւին որ իրենց հե-  
տեւող կաթուիկ Հայերը Հայոց էկե-  
ղեցին երթան: Մխիթարեանք ահով  
դողով ալ ըլլայ նե սիրս կուսային  
ազգայնոց՝ ըսելով թէ « Հայոց էկե-  
« ղեցին երթալը վնաս մը չունի.  
« ինչպէս որ հոն մկրտուած, հոն  
« պատկուած էք ամենքնիդ, եւ հոն  
« կը վերցուի մեռելնիդ, նոյնպէս  
« ալ հոն կրնաք կատարել ամեն  
« քրիստոնեական պարտքերնիդ: »  
— Ամբաստանուեցան Մխիթա-

րեանք իբրեւ Փրոփականսայի աշա-  
կերսաց քարոզութեան բոլորովին  
հակառակը սովրեցընող մարդիկ .  
որովհետեւ անոնք (այսինքն քուէնցի-  
ները) այնչափ կը զգուշացընէին ու  
կը զգուշացընեն իրենց միամիտ ժո-  
րովուրդը Հայոց եկեղեցին մտնելէն  
որ առակ եղած էր կամ թէ օրէնք՝  
ըսելը թէ « Հայոց ժամուն առջեւէն  
« անգամ մի անցնիր . իսկ թէ որ ան-  
« ցնիլ պէտք եղաւ ու զսակդ գլխեդ  
« հոն ձգեցիր, ներս մի մտնէր առնե-  
« լու, ձգէ փախիր. » ուսի ձայներ-  
նին քաշեցին Մխիթարեանք : Անոնց  
թելադրութեամբն էր որ Սեղբոսեան  
Յովհաննէսը իսայերէն գրուածք-  
ներ հանեց ու սպեց ի Վեներիկ իրէք  
չորս հասոր, եւ անոնց մեջ յայտնա-

պէս հաստատեց Հայոց եկեղեցւոյն  
ուղղափառութիւնն ու իրաւունքնե-  
րը, եւ թէ օրէն ե ու պէտք է որ հայկա-  
թովիկները երթան համարձակ Հայոց  
եկեղեցին : Բայց այն գրքերը ար-  
գելեալ գրուածոց Յուցակը դրուե-  
ցան ի Հռովմ' իբրեւ մոլորական  
գրքեր :

Գ. Լասինահայր մտքերնին դրած  
էին թէ մեր երանաշնորհ Օճնեցի  
X Խմաստէր հայրապետը բաժնէր է  
գՀայս ի քաղկեդոնականաց : Չամ-  
ջեան Հ. Միքայէլ վարդապետը  
յայտնի ապացոյցներով հաստատեց  
այն սուրբ կաթողիկոսին վարդա-  
պետութեանն ուղղափառութիւնը :  
— Ամբաստանուեցան Միսիթա-  
րեանը ի Հռովմ' իբրեւ ջասագովք

հերձուածողի եւ հերձամիտք, եւ Խ-  
մասաստիւրին գրուածքը լասիներէն  
թարգմանելով ու տպելով հագիւ կըր-  
ցան ազատիլ իրենց սպառնացեալ  
պատահասներէն :

Ե. Նոյն Չամչեան վարդապետը  
իր ուղիղ խղճմանքէն ու ճշմա-  
րիտ բայց վախկոտ ազգասիրութենէն  
ստիպուած՝ Հայաստանեայց եկեղե-  
ցոյ ուղղափառ վարդապետութեա-  
նը ջատագովութիւն մը գրեց *Վահանի*  
*ուղղափառութեան Հայաստանեայց*  
*եկեղեցոյ* անունով՝ ընդդէմ ան-  
խիղճ գրպարտութեանց Լասիւնաց ու  
Լասիւնահայոց: Գիտնալով թէ մեր  
ազգին թշուառութեան գլխաւոր  
պատճառներէն մէկը կաթուղիկու-  
թիւնն է, եւ ուզելով որ Հայերը հե-

ՈՒԼ մնան ի Լասիմացոց, ու ձե-  
ռուրնին զօրաւոր գէնք մը ունենան  
իրենց ուղղափառ եկեղեցին պաշ-  
պանելու ընդդէմ բաղերայից, քո-  
յէճոց, թրեսացոց, եւ անոնց  
նման մոլեմախանձ կաթուիկաց,  
շարադրեր եր այն հռչակաւոր գիրքը  
գործակցութեամբ Աւգերեան Հ.  
Մկրտիչ վարդապետին, որուն եւ կըսէ  
եղեր ընտանեքար, ինչպէս նաեւ  
միւս աշակերտացը. « Ֆոենկներեն  
« հեռնլ որդեակը, հեռնլ. մեր  
« խեղճ ազգին տունը քանդողն ա-  
« նոնք են : » — Գողցուեցաւ ձե-  
ռագիրը ի Պօլիս մայրապետի մը  
ձեռքով ու քոյէճոց ձեռքովը Հոովմ  
սարուեցաւ. ամբաստանուեցաւ հե-  
ղինակը, եւ քիչ մնաց որ պիտի դա-

սապարհուէր իբրեւ ներէտիկոս, ու  
գիրքը պիտի այրուէր իբրեւ մոլորա-  
կան գիրք. բայց Չամչեանին ար-  
ժանի քաջ աշակէտս՝ Աւգերեան Հ.  
Մկրտիչ վարդապետին ոգեսպառ աշ-  
խասանքովը հագիւ արդարացաւ  
Չամչեանը. իսկ գրուածքը Փրոփա-  
կանսայի դիւանին մեջ բանտ դրուած  
մնացած է մինչեւ հիմա :

Զ. Քանի մը Մխիթարեանը Հայոց  
Եկեղեցին Հռովմայ Եկեղեցւոյն հետ  
միաբանենք ըսելով՝ գնացին ազգին  
մեջ մտան, քանի մը աստուածա-  
բանական վեճեր ըրին, դրին մտքեր-  
նին թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ  
վարդապետութեան ուղղափառու-  
թիւնը պիտի կարենան Հռովմայ  
արողոյն ալ հասկըցընել. գնացին

համարձակ ազգային եկեղեցիները  
պատարագեցին ու քարոզներ տուին:  
— Ամբաստանուեցան Մխիթա-  
րեանք ի Հռովմ իբրեւ յայտնի հեր-  
ձուածողք ու մոլորեալք. մեկէն ի  
մեկ այն անձինքը կտրեցին հանեցին  
իրենց միաբանութենէն իբրեւ փետալ  
անդամներ, եւ հագիւ իջեցուցին  
Հռովմայ աթոռոյն անհնարին բար-  
կութիւնը: Կտրուած անդամները բո-  
ղոքեցին աղաղակեցին թէ մենք մեր  
միաբանութեան դիտաւորութեանն  
ու սկզբանցը դեմ բան մը ըրած չու-  
նինք, եւ թէ որ բռնած ճամբանիս  
ծուռ է՝ թող Աւգերեան Հ. Մկրտ-  
չին մեծահասոր Աստուածաբանու-  
թիւնները, յորում սովրած ենք մենք  
Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղա-



փառութիւնը , վանքին քառանկեան մեջտեղը դիզուին այրուին : Ո՞վ մտիկ կընէ :

Է. Սամուէլ Մուրատեան ազգասեր Հայը Հայոց ազգին որք եւ աղքատ տղայոցը համար դպրոց մը կանգնելու բաղձանօրք երկու միլիոն ժառանգները , դասաւորները , օրէնագէտները , աստուածաբանները եւ նոյն իսկ Մխիթարեանք այնպէս հասկըցան թէ այն մեծագումար հրիսակը կարողիկ Հայոց համար միայն ձգուած չէ , եւ ոչ յուսաւորչական Հայերը կարողիկ ընելու համար : Քանի մը յուսաւորչական տղաք ալ ընդունեցան այն դպրոցը (թեպէտ եւ խիստ բիշը ձրի) : — Ամբաստանուէցան

Մխիթարեանը ի հռովմ իբրև կարողութիւնը *վստնցի մէջ ձգող*, — այսինքն լուսաւորչական նայող մը ուրացութիւն նայելնի դաւանութեան չստանանջելով՝ այնպիսի կրթութիւն տուող որ տղաքը իրենց ծնողացը քով որ դառնան՝ նորէն անոնց եկեղեցին պիտի երթան ու պիտի կրտսնին : Տազնապէցան Մխիթարեանը, եւ նաւանեցան որ լուսաւորչական նայ աշակերտ կամ չառնուն, եւ կամ առաջ ուրացընէն լուսաւորչականութիւնը, խօսք տունն որ նայելնիրը դառնալէն էտե հայոց եկեղեցին ոտը չկոխէ, ու այնպէս ընդունին : Գալտոցին վերակացուները՝ քեպէտ եւ իրենը ալ Մխիթարեան կին այն ատենը՝ չդիմա-

ցան աշարան անիրաւութեան, ամուր  
դեմ բողոքեցին . — սրտաճուռեցան ,  
դատասպարտուեցան , դուրս ձգուե-  
ցան միաբանութենէն , ու հազիւ  
իջաւ Հռովմայեցոց բարկութիւնը :

Ը. Փրովականիսային աշակերտ-  
ները Միսիքարեանց հայասիրու-  
թիւնը (նեւեւաբար ներձուածողու-  
թիւնը) սպազումեամբ ու շատ  
ապացոյցներով հռչակեցին իսպել-  
րէն սպարաւազրքի մը մեջ : — Սմ-  
բատսանուեցան Միսիքարեանը ի  
Հռովմ իբրեւ իրաւամբ մեղադրու-  
եան արժանի մարդիկ : Տագնա-  
սեցան , շփոթեցան , սակնու վրայ  
եղան , ետեւեւ ետեւ մեկմեկե ցած շո-  
ղորքութիւններով գրուած յայտա-  
բարութիւններ տուին Հռովմայ արտ-

ույն, երդում պատճառ ըլլալով որ  
իրենք ալ ամենաջերմեռանդ կարո-  
ւիկ են Փրովականացոց պէս, եւ  
Հռովմայարուոյն անցեալ՝ ներկայ  
եւ ապագայ հրամաններուն կուրօ-  
րէն հնազանդ, եւ գՀայերը Քրիստոսի  
եկեղեցիէն դուրս կըճանչնան ու  
կուսեան որդիք : Հագիւ իջեցուցին  
անով *սու ժամս* Հռովմայեցոց բար-  
կուքիւնը :

Թ. Լուսաւորչական հարուս եւ  
բարեպաշտ՝ ազգասէր եւ ուսումնա-  
սէր պատուական անձ մը Մխիթա-  
րեանց մեծաւորին մասը քանկազին  
մասնի մը անցընելով ու գլխաբաց  
համբուրելով անոր աջը, կըխնդրէ  
կրկին եւ կրկին պաղտասանօք ուրիշ  
միաբանից առջեւն ու յայտնի խոս-

մունք կրնողունի որ գեթ այսուհետեւ  
Մխիթարեանը իրենց հայերէն եւ  
օտար լեզուով գրած գրքերնուն մեջ  
*հերձուածող ու հերկեփկոս* անուններով  
չնախասէն անմեղ եւ բարեպաշտ  
ազգերնիս, եւ օտարաց այլ ասելի ջը-  
նեն զինքը : Բաւական մեծ գումար  
մըն այլ կուսայ ձեռքերնին որ ազգին  
յսուաջադիմութեանը համար օգ-  
տակար գրքեր շարադրեն սպազրեն  
ու աման աման սարածեն : —  
Կամբաստանուին Մխիթարեանը ի  
Հռովմ քե այն բարեպաշտ անձին  
խորհրդական խոստովանութիւնը  
լսեր են . եւ — առանց մասնին ու  
ստակները ետ դարձրնելու — ոչ  
միայն ըրածնին արդարացընելու  
չեն համարձակիր, այլ եւ կելլեն ու-

րիջ ասէններէն ալ աւելի կասաղա-  
բար կընախասէն ազգը՝ *հերձու-  
ծող, հերէսիկոս, մոլորեալ* անուա-  
նելով իրենց գրուածոցը մէջ :

**Ճ.** Մխիթարեանց մէկը ազգասի-  
րական մտածութենէ շարժած՝ կը-  
յորդորէ միամտութեամբ մէկ քանի  
ուսումնասէր երիտասարդներ որ ազ-  
գին մէջ միաբանութեան սերն ու  
յառաջադիմութեան նոգին ծաղկե-  
ցրնելու համար *Համազգեսց ընկե-  
րութիւն* անուանով ընկերակցութիւն  
մը հաստատէն, այն ընկերութեան  
կանոններն ալ ինքը կըշարարէ :  
— Կամբաստանութիւն Մխիթարեանը  
իբրեւ ազգը միացընելու ճամբաներ  
հնարող վճանգաւոր մարդիկ : Բացէ  
ի բաց կուրանան իրենց համախոն

ըլլալը այնպիսի դասապարտելի գործողութեան, եւ այն անձը իբրեւ պատժապարտ ու չարագործ վանք կրկանջեն որ ըրած յանդուզն ազգասիրութեանը վրայ ապաշխարէ :

Ահաւասիկ մեր խօսքին տասը ապացոյց՝ որ հարեւանցի կերպով միայն յիշեցինք. եւ ասոնք հարիւրին մեկը կըսեպուին : Բայց միքե բաւական չեն գրասէր եւ ազգասէր մարդու մը գոչել տալու հառաջմամբ. « Խեղճ Մխիթարեանք ... » եւ յիրաւի, աւելի անոր համար ալ խեղճ՝ որ իրենց խղճին ու գիտակցութեանը դէմ կըշարժին : Շատ ու շատ անգամ հասկըցեր են իրենք ալ, ու համաւրձակ գանգատելով ըսած են իրարու եւ կըսեն. « Այս ինչ է

« քաշածնիս, եղբարք. քանի մեկ  
« այս գերութեան մեջ պիտի մնանք.  
« Երբ պիտի ազատինք ու ազգերնիս  
« ալ ազատենք այս կաթոյիկու-  
« թեան անսանելի յուժէն, ինչ շան  
« ունինք հոգեւոր կամ մարմնա-  
« լոր՝ այսպէս հարիւրաւոր սարի-  
« ներէ հետէ ապերախօս օտարազգի  
« եկեղեցականներու շողորորթե-  
« լէն. մանաւանդ թէ ինչ վնասներ  
« ջենք կրած անոնցմէ ու կրել ջենք  
« տուած ազգին ... » — Իրաւունք  
« ունիս, եղբայր, կըսեն ուրիշները.  
« անսանելի է այս մեր կրած բըռ-  
« նութիւնը, անպարտօրկելի է այս  
« մեր ակամայ կեղծաւորութիւնը.  
« Բայց ինչ ընենք. միթէ՛ կրնանք  
« Հոռոմին դէմ կենալ՝ ու միաբա-



« ԼՈՒՔԻՆՆԻՍ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՎՏԱՆ-  
« ՉԷՆ ԱՉԱՏ ԱՎԱՆԵՂ : ԱՍՏՈՒԱԾ  
« ՏԵԱՆԷ ՔԱՉԱԾՆԻՍ ՈՒ ՈՂՈՐՄԻՄԵՉԻ  
« ԷՆ ՄԵՐ ԱՉԳԻՆ » ԿՐՍԵՆ, ՈՒ ԿԱՐՈՒ-  
ՎԻԿՈՒՔԵԱՆ ՂԻՄԱԿՐ ԼՈՐԷՆ ԵՐԷԱՆԻՆ  
ԱՆԳՈՒԾԱԾ ԿՐՎԱՐՈՒԻՆ ՀՈՈՎՄԱՅ ՈՒ  
ՀՈՈՎՄԵԱԿԱՆԱԳ ՆԵՏ :

Այո, Միսիբարեանց Երեսին վրայ  
*ղիմակ* է կարոյիկուքիւնը : Եթե  
այնչափ քաջուքիւն ունենան որ այն  
ղիմակը նանեն մեկդի նեսեն, ու  
բուն կերպարանքնին՝ այսինքն հայ-  
ուքիւննին Երեսայ, մեկեն ի մեկ  
իրենց սկզբնական ոգին դուրս պիտի  
ելէ. ասոր տարակոյս չկայ : Իսկ թե  
որ մարդկային նկատմունքներով,  
անարգ շահասիրութեամբ, ցած շո-  
ղորբորթութեամբ, տղայական երկն-

տութեամբ եւ ազգակործան ջանքերով, Հռոմին ու պապին աչքէն չելլենք ըսելով՝ իրենց բան ու գործ ընեն միշտ հնոսի ու պատուած դիմակնին կարկըսելը, բող չգարման իրենց օտարներէն կրած նեղութիւններուն շատութեանը, եւ ազգին կողմանէ լսած նախասիրներուն սասկուքեանը վրայ: Նպատակէն խոտորեալ մարդկանց բաժինը այս է:

Բայց քիչ մըն ալ աւելի քննենք Տեսները քէ արդեօք Միսիքարեանց կարողիկութիւնը իրաւցընէ դիմակ է, եւ այն դիմակը հանելուն հնարքը ո՞րն է:

Միսիքարեան միաբանութիւնը իսկապէս Հայ վարդապետաց միաբանութիւն է: Հիմնադիրը Սեբաս-

սիոյ սուրբ Նշանի վանքը կրթուած՝  
Էջմիածնական հայ վարդապետ, իր  
առաջին աշակերտներն ալ մէյմեկ  
լուսաւորչական վարդապետք էին :  
Ասոնք իրաւցընէ հռոմէական կա-  
թոլիկ եղան շուսով . բայց ոչ թէ  
համոզմամբ մտաց որ իբր թէ Հայ-  
աստանեայց Եկեղեցւոյ վարդապե-  
տութեանը մեջ մոլորութիւններ կան,  
եւ թէ Հայ ծնած ու մկրտուած ան-  
ձանց համար փրկութիւն չկայ. քնն  
լիցի : Հիմա անգամ հաւատոյ մա-  
սանց կողմանէ ՚նր մոլորութիւնը  
կայ որ տուի Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյն, ու Միսիքարեանը ճաշխասի  
ջասագովելու արդարացընելու զայն  
Էրեւ զուս եւ սգիտական զրպար-  
տութիւն :

Հապա ինչ է վրան երեւցած հոով-  
մեակրան կարոյիկուքիւնը . ինչ է  
սպանանն որ Հայոց եւ հայութեան  
համար քրած ջահագովութիւնը  
դուրս ելլելուն պէս՝ կուրանայ, կը-  
փախչը՞՞՛, կըպահուը՞՛, կամ քե  
երբեմն նաեւ քշնամեաց կողմը  
անցնելով՝ անուց բուրը կըքաշե  
իր ազգին դեմ . ինչ է որ անդա-  
դար « Գուցե գայցեն Հոռոմք (այս-  
« ինքն Հոռովմայեցիք) եւ բառ-  
« նայցեն զազգս մեր եւ զՏեղի »  
կըսեն իրարու եւ կըճագնասպին . ինչ  
է որ սեպ սեպ կայիափաներ կը-  
գճնուին մեջերնին որ կըսեն ժողովա-  
կանաց քե « Գուք ոչինչ գիտէք , եւ  
« ոչ բնաւ խորհել իսկ՝ քե լաւ է մեզ  
« զի այր մի (կամ երկու կամ երեք)

« մեռանիցի ի վերայ ժողովրդեանս,  
« եւ մի ամենայն ազգս (միաբա-  
« նութիւնս) կորիցէ (յերեսաց պա-  
« պին Հռովմայ) ... » Ի՞նչ են կրօնք  
այս կեղծաւորութիւնները՝ էրէ ոչ  
հարիւր յիսուն տարուան անկարկա-  
սելի դիմակ՝ առ հարկի տեղոյ եւ  
ժամանակի երեսին անցած, եւ  
մինչեւ հիմա մնացած :

Իրաւցրնէ առ հարկի տեղոյ եւ  
ժամանակի : Միսիքար արքան ա-  
շակերտներովը հանդերձ այնպիսի  
հռովմեական կրօնամոյ երկիր մը՝  
այսինքն ի Մերոն եւ ի Վենետիկ  
ապաստանեցաւ որ էրէ կարողիկու-  
թենէ տարբեր դաւանանքի տէր ցու-  
ցրնէր ինքզինքը, ոչ պաշտպանու-  
թիւն պիտի զտնէր, ոչ օգնութիւն, ոչ

ստակ, ոչ բնակութիւն, ոչ երկիր եւ  
ոչ իսկ ուսման եւ կրթութեան մի-  
ջոցներ : Հարկ եր ուրեմն կերպով մը՝  
այն զգացմունքը որ արդէն ունեցեր  
էր Լասինացոց դաւանանքին մո-  
լորական ջրվալուն վրայ՝ բոլորո-  
վին կաթոլիկութեան դարձընէ, ու  
հասկըցընէ Վենեսկեցոց քէ ինքն  
ալ իրեններովը հանդերձ ջերմեռանդ  
հռովմեական ու պապական կա-  
թոլիկ է : Թերեւս միտքը դրած էր  
քէ այնչափը բաւական է իր վախ-  
ճանին հասնելու համար . բայց այն-  
պէս չէր : Մերոնի իսալացի կրօնա-  
ւորներն ըսին իրեն . « Երէ դուք ալ  
« մեզի պէս պապական էք , պէտք  
« է որ ձեր միաբանութիւնն ալ  
« պապին հրամանովն ու հաւա-

« Լուրբեամբք հասսասուի: » Հարկադրեցաւ Միսիրար պապին պաշտպանութեանը դիմելու, եւ իր սակաւաբիւ պարզ կանոնադրութիւնը պապին հրամանովը հասսասելու: Այն ասէն հերձուածողութեան կասկածը վերուցին Վենետիցիք վրայէն, օգնեցին իրեն, ստակ տուին, տեղ տուին, եւ առաջ տարաւ իր միաբանութիւնը:

Սակայն առ հարկի եղած բանը հասսասութիւն չձևենար: Ահա վենետիցի Յոյնք ալ տեսնելով որ Վենետիկոյ մեջ ազգային եկեղեցի պիտի չկարենան ունենալ՝ Վենետիցաց հասարակապետութեան կրօնամոլ ասէնները, իրենք զիրենք կարօյիկ ձեւացուցին, եւ յետոյ արիացան դի-

մակը մեկդի ձգելու եւ ազգութիւն-  
նին յայտնի ընելու. որով այսօրուան  
օրս իրենց եկեղեցին եւ ժողովուրդը  
պապին իրաւասութիւնը չճանցնար  
ամենեւին : MB :

Որովհետեւ Մխիթարեանց այ հայ-  
ասիրութիւնը բնածին է, եւ լատին-  
նասիրութիւնը բռնական եւ եկա-  
մուտ ու շինծու, ինչպէս որ վերը յի-  
շուած օրինակներէն այստեսնուեցաւ,  
կըհարցընենք իրենց թէ ինչ հարկ  
կայ որ հիմայ այ հռովմեական լու-  
ծին տակը հեծեն հառաջէն : Ի՞նչ  
հարկ կայ որ այսօր այս կարդինա-  
լին, վաճը միւս նախագահին, մե-  
կայ օր Փրովականտայի մեկ ուրիշ  
քարտուղարին գոռոզութեանը կամ  
կրիցը կամ տգիտութեանը խաղա-



իկ ըլլան : Խ՞նչ հարկ կայ որ իրենց  
ազգին բարւոյն ու յառաջադիմու-  
թեանը աշխատելու համար՝ Փրո-  
փականսայի հրամանին սպասէն,  
անկէց ընդունին իրենց փաճեղան<sup>1</sup> :  
Խ՞նչ հարկ կայ որ իրենց ազգին կըր-  
թութեանը պիտանի ճանչցուած  
գրքերը՝ Հայերուն ինչ ըլլալը չգիտ-  
ցող կարդինալաց քննութեանը սակ  
ձգեն : Խ՞նչ հարկ կայ որ ազգին  
սըկովը ազգին որբոցն ու աղքա-  
սացը համար հիմնուած դպրոցնե-  
րուն տեսչութիւնն ու կառավարու-

---

<sup>1</sup> Վերջի տեսններս արեւելքէն Մխիթարեանց  
ոտքը բոլորովին կտրելու դիտաւորութեամբ  
սահմանուած ու Փրոփականտայէն տրուած տե-  
սակ մը *հրամանագիր*. ով որ զայն չունի՝ չկրնար  
հոն քահանայական պաշտօն կատարել :

քիւնը հռովմեական սիրապետութեան ազգակործան հոգւոյն զոհեն ու մահնեն : Ի՞նչ հարկ կայ որ իրենց խղճմանքին եւ ամենայն արդարութեան դեմ՝ անմեղ եւ ուղղափառ ազգերն իս անդադար հերձուածող եւ հերետիկոս անուանեն : Ի՞նչ հարկ կայ որ ամօթալի յանդգնութեամբ գիր սան պապին քե « Քեզի ջհնա-  
« զանդող Հայերը Քրիստոսի էկե-  
« ղեցիեն դուրս կըճանջնանք... »

Մենք ասոնց եւ ոչ մէկը հարկ՝ եւ ոչ մէկը օրինաւոր կը համարինք, ոչ երբեք . այլ ընդ հակառակն մեծապէս հարկաւոր ու Միսիքաւանց անհրաժեշտ պարտք մը գիտենք՝ արդարութեան եւ ճշմարտութեան ճամբան բռնել, ազգային սուրբ էկե-

դեցւոյն անկապսեւի իրաւունքները  
պաշտպանել, անոր ուղղափառու-  
քիւնը ջատագովել, պակասութիւն-  
ները (եթէ ունի) պարտըկել օտարաց  
առջեւ ու վերցընելու աշխատիւ.  
ազգիս լրութեանը մեջ մտնել. Հայաս-  
սանի գեղերն ու քաղաքները պսը-  
սիւ. ժողովրդոց հոգեւորական պի-  
տոյքը հոգալ. բիւրաւոր պատանե-  
կաց ուսմանն ու կրթութեանը ուշ  
դնել. աժան գրքերով, օգտակար  
օրագիրներով, ազգասիրական ըն-  
կերութիւններով ուսման եւ արուես-  
տից սերը ազգին մեջ ծաղկեցընել :  
— Հապա Հռոմիմ, հապա Հռով-  
մայեցիք, հապա հռովմեակաւանք :  
— Հռովմայ եւ Հռովմայեցւոց բող-  
ոսալ որ իրենց մեռելը լան. իրենց

ժողովուրդները խուճբ խուճբ ի բողոքականութիւն դառնալէն, յանկրօնութիւն կործանելէն բռնեն՝ եթէ կրնան. Եւրոպայի ու Ամերիկոյ եօթանասուն միլիոն բողոքականները դարձի բերեն. այն ալ ընելէն ետեւ՝ քող Չին ու Ճափոն եւ Ովկիանիոյ կղզիները քարոզիչներ յուղարկեն՝ եթէ կուզեն, եւ երեքհարիւր միլիոն կուսակաշները ի քրիստոնէութիւն դարձնեն :

— Բայց պապը զմեզ կըցրուէ :

— Միթէ պապը ժողովեր է զմեզ որ պապը ցրուէ :

— Յրուել կուտայ զմեզ :

— Որո՞ւ ձեռքովը . Աւստրիոյ . ո՞չ ապաքէն անտեղի բան է մտածելն որ Աւստրիոյ պէս տէրութիւն մը՝

որոյ բնակչաց գրեթէ երրորդ մասը բողոքական՝ յունադաւան ու հրեայ է, ելլէ Մխիթարեան միաբանութիւնը հալածէ Սուրբ Ղազարու կողմէն՝ ինչո՞ւ համար կամայ եւ ակամայ պապին չէք հնազանդիր ըսելով :

— Հապա քշէ նէ :

— Թերեւս մեծ բարիք կընէ թէ՛նք եւ թէ՛ ազգին, վասն զի ի պանդխտութենէ ի հայրենիս կըքշէ: Բայց ոչ. Վենետիկ կընաք մնալ. միայն Հռոմի վանաստուը պիտի գոցէք, զոր դիմակի գործարան կընանք կոչել համարձակ : Վասն զի Մխիթարեանց մեջ ջերմեռանդ հոռվմեականութիւնը այնպէս ենեկն սկսաւ երբոր Հռոմի մեջ վանաստուն ունե-

ցան, եւ այն ասէն անէցաւ՝ երբոր  
հոնսեղի ազգային ըսուած հիւրա-  
նոցին կառավարութիւնը իրենց  
ձեռքն անցաւ, եւ Փրոփականսային  
հայազգի աշակերտաց ձեռնադու-  
րիւնը իրենց յանձնուէցաւ : Քանի  
մը սարիէ ի վեր այն վանասունը կը-  
յուղարկուին կամ կը քշուին Մխի-  
թարեանց վանքին փոքր ի շատե-  
ազատամիտ ու ազգասէր երիտա-  
սարդները, որպէս զի աջուրնին  
Հռովմայ արժողոյն փայլունութե-  
նէն առնուի, ու իրենք ալ հռով-  
մեական հոգևով քրծուին : Ուսի  
զարմանք չէ որ Փարիզու Մուրա-  
տեան վարժարանն ալ, Վենետիկոյ  
վանքին մէկ մասն ալ՝ Հռովմ փո-  
խապրենք ըսողներ զհնուէցան իրենց

մեջ : Չարմանք չե որ երկու երէք  
սարի առաջ այս գրուածքիս հեղի-  
նակն ալ, իւր պաշտօնակից անձն  
ալ ի Հռովմ հրաւիրուեցան այժմու  
մեծաւորէն . վասն զի անշուշ  
յայտնի եր իրեն համար որ անոնք ալ  
ուրիշներուն պէս կամ դարձի պիտի  
գային ու մեյմեկ ջերմեռանդ հռով-  
մեականներ ըլլային, եւ կամ հոն  
սրերնուն նեղութենէն ու խիղճեր-  
նուն անհանգստութենէն քիչ ասենի  
մեջ պիտի հիւանդանային ու առ  
Ասուած փոխէին : Փնւք Ասու-  
ծոյ որ երկու փորձանքէն ալ ազատ  
մնացին :

Ի՞՞ճալերէն պարսաւագրքին հռով-  
մեական հեղինակը խորհուրդ կու-  
սայ Հռովմայեցւոց որ Մխիթա-

րեանները այրուին ու վանքերնին  
կործանուի : Բայց մենք հռովմեա-  
կան ջենք ու Հռովմայեցւոց հետ բան  
չունինք . հեռու մեզմէ այնպիսի  
անգուր եւ ամբարիշտ մտածութիւն :  
Մեր յոյսն ու փափաքը այս է միայն՝  
որ Միսիթաւանք իրենց կարողի-  
կութեան դիմակը մեկդի ձգեն , եւ  
աներկբայ ենք որ երբ իրենց բուն  
հայկական ոգին ու կերպարանքը  
ազատօրէն ու զուարթերես երեւնայ ,  
մեծամեծ օգուտներ կրնան ընել մեր  
ազգին :

---



ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԸՆԹԱՅԻՑ

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տեսնուեցաւ անա փոքր ի շատե  
 որ ըստ մեր կարծեաց Միսիթարեան  
 Միաբանութեան սկզբնական ոգ-  
 ւոյն փոխուելուն մի միայն պատ-  
 ճառ կաթողիկոսիւնն է: Հիմայ ալ  
 զայն ցուցրնենք թէ նոյն միաբա-  
 նութեան ընթացքին ալ փոփոխու-  
 րեանը բուն պատճառ այս է որ իր  
 այժմու սահմանադրութիւնը առ-  
 նուած է Յիսուսեանց՝ այսինքն ձիզ-  
վիրներուն սահմանադրութենէն .

Մխիթար աբբանայրն իր միաբանութեանը համար պարզ եւ համառօտ կանոնադրութիւն մը շարադրած էր, եւ անով կառավարութեան Մխիթարեանը բոլոր իր աբբայութեան ժամանակը: Այն կանոնները 1712ին հաստատուած էին Հռովմայ պապէն ու Փրովանկասայէն, բայց իբրեւ առժամանակեայ սահմանադրութիւն, ասեցով կասարելագործուելու կարօտ. վասն զի անոնց մեջ կրօնաւորական կարգերը իրենց պարզութեամբը աւելի յարմար էին արեւելեան եւ հայկական ողջամիտ հոգւոյ՝ քան թէ եւրոպական ու հռովմեական բազմակնճիռն քաղաքականութեան: Ուստի եւ Մխիթարայ յաջորդ Մելքոնեան

Ստեփանոս աբբային ժամանակը  
Փրոփականսան ստիպեց զՄխիթա-  
րեաններն որ իրենց սահմանադրու-  
թիւնը *ըստ զրնէն*, որ ըսել էր՝ սրբա-  
գրեն, փոփոխեն, աւրեն, այնպէս  
որ անով կաթոյիկութեան ոգւոյն  
աւելի յարմար ընթացքի մը մեջ  
մտնէ Մխիթարեան միաբանու-  
թիւնը :

Հարկադրեցան Մխիթարեանք  
իրենցմէ Անանեան Հ. Մկրտիչ վար-  
դապետը յուղարկելու Հոռոմ 1759ին,  
եւ հոն Փրոփականսայի ժողովէն  
չորս կարդինալ որոշուեցաւ հին  
սահմանադրութիւնը սրբագրելու :  
Իսկ անոնք աւելի դիւրին եւ իրենց  
դիտաւորութեանը աւելի ձեռնառ-  
եալան՝ ձիգվիթներուն սահմանա-

դրութիւնը տալ Մխիթարեանց իր  
աղակութիւններովն ու պակասու-  
թիւններովը հանդերձ՝ 1763ին :  
Չէին կրնար Մխիթարեանը ըսել թէ  
այն կանոնները իրենց չեն յարմա-  
րիր . վասն զի Փրոփականսայի  
առաջարկութեամբը պատը հաս-  
տատեալ էր զանոնք, եւ պատուիրէր էր  
որ ամենայն Մխիթարեանը պար-  
տաւոր ըլլան անոնց ճիշդ պահպա-  
նութեանը . իրենք ալ իբրեւ կարո-  
լիկ եւ պատական՝ սխալուեցան ըն-  
դունելու ի վնաս անձանց եւ ազգին :

Թէ որ երկու հարիւր տարիէ մը ի  
վեր Ներսիսայի մեջ *ճիզվիթ* ըսելը  
համազօր է *կեղծաւոր*, *բանաստեղծ*,  
*ստիպոս* եւ *փարիսէցի* ըսելուն ,  
յայտնի բան է որ այն ճիզվիթու-

բեան նիմը իրենց սանմանադրու-  
քիւնն է. եւ որչափ որ մեկը այն  
սանմանադրութիւնը ճիշդ պահե՛  
այնչափ աւելի *ճիգովի* է : Աւր որով-  
նեսեւ այժմու Միսիքաբեանց սան-  
մանադրութիւնն ալ ճիգովիքներուն  
սանմանադրութեան գրեթէ բառա-  
կան քարգմանութիւնն է, հարկաւ  
պիտի գտնուին մեջերնին անոր կա-  
նոնները ճիշդ պահողներ, որ ըսել է  
հայ ճիգովիքներ : Եւ մենք այնպիսի  
անձինք տեսնէնք դժբաղդութեամբ  
վանքին մեջ որ ոչ միայն վարուք  
ճիգովիք էին, այլ եւ *ճիգովի* ըսուիլը  
իրենց մեծ սպարճանք կրնամարեին :

Միայն թէ այս ալ կայ որ այն  
սանմանադրութիւնը ոչ երբէք ըն-  
դունելի եղած է ամենայն Միսի-

թարեանց առ հասարակ. ուստի եւ միշտ փափաքելի եղեր ե իրենց որ փոխուի ու սրբագրուի, եւ միաբանութեանն ու ազգիս այժմու պիտոյիցը յարմարցուի :

Երբոր 1846ին ընդհանուր ժողով ըրաւ Միաբանութիւնը նոր մեծաւոր ընտրելու համար, ու այս խնդիրը մեջ բերուեցաւ գորաւոր փաստերով՝ պահանջելով որ մեծաւորին ընտրութենէն առաջ սահմանադրութիւնը սրբագրուի, քանի մը հոգւոյ հնարքովը որոշուեցաւ որ այն խորհուրդը նոր մեծաւորին ընտրութենէն էտքը ձգուի : Ընտրուեցաւ մեծաւորը, եւ խնդիրը նորէն մեջ բերուեցաւ, բայց ուշ էր. իշխանութիւնը ջերմեռանդ ճիգովիթներու ձեռք անցեր էր, եւ

անոնք պատասխանեցին՝ ժողովա-  
կանաց քե « Սահմանադրութեան  
« սրբագրութիւնը ժամանակի կա-  
« րօս բան է. որովհետեւ ըստ կա-  
« նոնի՝ ինը տարին մէյմը ընդհա-  
« նուր ժողով պիտի ըլլայ, մեծա-  
« ւորը կըխոսանայ որ մինչեւ 1854  
« սահմանադրութեան սրբագրու-  
« րթիւնները պատրաստուին, եւ այն  
« տարուան մէջ ըլլալու ժողովով  
« քննուին ու հաստատուին: » Յայտնի  
է գիտցողներուն որ ինը տարին տաս-  
նըմէկ եղաւ, ու դեռ ընդհանուր ժո-  
ղովի ձայն չկայ: Իսկ երբ յանկարծ  
բարեմիտ Միսիբարեանց ոմանց  
ակնկալութիւնը կատարուելով երբ  
եւ իցե՛ր ընդհանուր ժողովը գումարի,  
խորհուրդ կուտանք իրենց կարեկ-

ցաբար որ այն առքով ոչ միայն հռովմեական դիմակը մեկդի ձգեն, այլ եւ այն ճիգվիրական սահմանադրութիւնը, այն կեղծաւորութեան խմորը. « Զգոյշ լերուք ի խմորոյ Փարիսեցւոցն, որ է կեղծաւորութիւն : »

Բայց այն սահմանադրութեան քանի մը պտուղներն ալ հարեւանցի կերպով մը քննենք Տեսնենք քե իրաւցընէ վնասակար են Միսիթարեանց եւ Ազգիս, ինչպէս որ մենք կը կարծենք, եւ քե ինչպէս պատճառ կրնան Միսիթարեան միաբանութեան ընթացիցը ծռելուն :

---



Ա. ԱՆՈՒՂԻՂ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՈՒՍԱՆՈՂԱՅ ԵՒ ՆՈՐԸՆԾԱՅԻՅ

---

ԿՐՕՆԱԼՈՐԱԿԱՆ միաբանութեան  
մը կասարելութիւնն ու սլակասու-  
թիւնները ճիշդ հասկընալ ուզողը  
հարկաւ պիտի նայի թէ անոր մէջ  
մտնող աշակերտաց ինչ տեսակ կըր-  
թութիւն՝ ինչ կերպ դաստիարակու-  
թիւն կը տրուի: Տարիքը առած կրօ-  
նաւորի մը կասարելութիւններն ու  
սլակասութիւնները անոր անձնա-

կան բնաւորութեանն ու այլ եւ այլ պարագաներու կրնայ տուիլ. ջիւացուի՞ր որ այս կամ այն աղէկութիւնը եւ կամ պակասութիւնը հէ՞տը բերեր ք վանք՝ թէ վանական կրթութենէն առեր ք, կամ թէ կրօնաւորելէն ետքը ստացեր ք: Իսկ դեռահասակ աշակերտաց տուած կրթութիւնը մեկէն յայտնի կրնէ թէ Միաբանութեան հոգին ինչ ք, եւ հոն մտնելու զոողէն ինչ տեսակ գաղափարներ եւ ինչ կերպ վարմունք կը պահանջուի:

Տեսնենք համառօտիւ թէ Միաբանութեան միաբանութեան մեջ մտնելու զող պատանին ինչ կրթութիւն կառնու հոն ըստ սահմանադրութեան:

Վանքին նորընծայարանը, կամ  
քէ աւելի ճիշդ ըսենք՝ ուսումնա-  
րանը մտնող պատանիք ընդհանրա-  
պէս տասնէն մինչեւ տասնըջորս՝  
տասնըհինգ տարեկան կըլլան: Կը-  
պատանին աւելի մեծահասակներ  
այ, բայց վերակացուները անոնց  
ուզած կըթուրիւննին տալ կարենա-  
լէն կըյուսաստանին, անոր համար  
որ բնաւորութիւննին հաստատուած  
կըլլայ, եւ իրենց տալու նոր դաս-  
տիարակութեան շատ դժուարաւ կը-  
յարմարի:

Երէ հարցընես այն դեռահասակ  
պատանւոյն որ ոտքը Սուրբ Ղազար-  
ու նորընծայարանէն ներս կըդնէ  
քէ «Ինչո՞ւ եկար հոս, որդեակ, » մե-  
կէն ի մէկ պատասխան կուտայ քէ

« Վարդապէս ըլլալու համար : »

— Ուսկի՞ց եկաւ քեզի այդ փա-  
փաքը :

— Այս անուն վարդապէսը մեր  
սունը շահ կուգար . հօրս մօրս հետ  
խօսեցաւ , առաւ զիս հոս դրկեց :

— Գուն հիմա գո՞ն էս հոս գա-  
լուդ :

— Այո... »

Թե որ քիչ մը համարձակ բնու-  
թիւն ունենայ՝ կըհարցընէ անուշ  
պարզմտութեամբ մը քե « Վարդա-  
« պէս, արդեօք բանի՞ տարիէն էս այ  
« վարդապէս կըլլամ ու հայրենիքս  
« կըդառնամ : » Իսկ հետը խօսողն  
որ զիտէ քե *գուցէ* անիկայ մէյմընայ  
հայրենեաց երեսը տեսնելիք անգամ  
չունի , ինչպէս որ շահին եղած է ,

հարկաւ կըխնայ մտքէն, կըծպտի  
դրսէն, ու կըպատասխանէ տղուն թէ  
« Ուրը տասը տարին բաւական է  
« վարդապէտ ըլլալու. գիտես *ես*,  
« վարդապէտ ըլլալու համար բան  
« սովբէլու եւ մօռուք ունենալու է,  
« Բան մը չէ. տասը տարին տասը  
« օրուան պէս կանցնի. դուն նայէ  
« որ աղէկ կանոնապահ ըլլաս: »

Ատնը եւ այսպիսի խօսքեր լսե-  
լով՝ կըսկսի տղան ուզէ չուզէ այն  
նոր կեանքին նեղութիւններուն ու  
հանգստութիւններուն վարժիլ. եւ  
երկու երէք տարիէն թէ որ իր կամօքը  
եւ կամ տարբիւն բնութեանը կամ  
ուրիշ մէկ պակասութեանը պատ-  
ճառաւ ետ չյուզարկուի, — ինչպէս  
որ կըլլայ սովորաբար տասնէն վե-

ցին . — այնուհետեւ *վարդապետ* քա-  
լալու փափաքը սրտին մեջ կըքաղէ  
կամ մեկդի կըդնէ իբրեւ փառասի-  
րական մտածութիւն եւ ոչ կրօնա-  
ւորական հոգի , ու կըսկսի ճգնա-  
սիրութեան ետեւէ ըլլալ կամ բնա-  
կան ախորժանօք եւ կամ ուրիշի  
յորդորանօքը , երբեմն ալ վերակա-  
ցուին խրատներովն ու ամբջցընող  
յանդիմանութիւններովը ... Տղուն  
վրայ կարգէ դուրս հանդարտութիւն  
կամ թէ ըսեմ թմրածութիւն ու  
վախկոտութիւն մը կուգայ . մանր  
մունր եւ աննշան կանոններու դեմ  
պակասութիւն մը ընելը ուրիշի  
առջեւ ' մեծ մեղքի տեղ դնելով .  
հրապարակաւ ծունկ կըչոքի ու թո-  
ղութիւն կըխնդրէ վերակացուէն .

այն ալ երբեմն քաղցրութեամբ, երբեմն ալ սաստիկ յանդիմանութեամբ թողութիւն կուտայ: Հարկ չէ ըսել թէ շատ տղաք ալ կը գտնուին որ դրսէն այն խղճահարութիւնները կը ձեւացրնեն ու ներսէն բաւական մեծկակ յանցանքներ կընեն ու կը պարտք կեն: Եւ այն կըլլայ փարիսական խմորին տղուն սրտին մէջ բռնած ըլլալուն առաջին նշան, եւ հետ զհետէ առաջ կերթայ խմորումը մինչեւ որ բոլոր զանգուածը կեղծաւորութեան խմորովը թթուի՝ նաեւ հետագայ ճամբաներով:

Երբոր պատանին սասնըհինգ կամ սասնըվեց տարեկան ըլլայ, երբեմն ինքիւրմէ՝ շատ անգամ ալ միայն ուրիշներու օրինակէն ու խօսքերէն կը

յորդորուի որ *նորընծայ* ըլլալու, այս ինքն կրօնաւորութեան պատրաստելու փափաք ցուցրնէ վերակացուն: Կրնասկըցրնեն իրեն պտոյս խօսքերով որ երէ յանկարծ չուգէ այնպիսի փափաք ցուցրնել, կրնայ վանքէն ետ ճամբուի խայտառակաբար՝ իբրեւ իր կոչումը կամաւորսընցրնող անկարգ եւ աշխարհասէր տղայ, այնպէս որ այնուհետեւ վանքին մեջ միշտ նախասանօք պիտի յիշուի անունը՝ իբր թէ նոզւով մարմնով կորսուած ըլլար, թեպէտ եւ անիկայ աշխարհի մեջ բարեպաշտ ու բարեկիրք անձ կարենայ ըլլալ, ինչպէս որ շատն ալ եղեր են: Խեղճ տղան մեկդիէն այսպիսի խօսքեր կըլսէ ու կըմտածէ, ինքզինքը



աւելորդ եւ անիրաւ վախկոսութեան մը կուտայ. մեկայ դիէն ալ այնչափ խրատներ ու յորդորանքներ կըլսէ աշխարհիս ունայնութեանը, մարդկային ընկերութեան միայն պակասութեանցը, կրօնաւորական վիճակին միայն աղէկութեանցն ու հանգստութեանը վրայ՝ թէ հրապարակաւ եւ թէ առանձին, որ կամ խղճահարութեամբ եւ կամ գէր կեղծաւորութեամբ, գոնէ շաբաթը մէյմը կերբայ վերակացուին առջեւը ծունկ չորած (ինչպէս որ կանոնն է) նորընծայութեան փիլոնը կըխնդրէ, որ կրօնաւորական ուխտադրութեան պատրաստի: Վերակացուն սովորաբար ծանրէն կըքաշէ, շատ անգամ այս գովելի դիտաւորութեամբ

որ տղան հասկընայ թէ ինչ բան է  
խնդրածը՝ որպէս զի ուխտելէն ետեւ  
չզրոջայ . բայց երբեմն ալ վնասա-  
կար խորագիտութեամբ մը կը գովէ  
զտղան երեսին ու յորդորանօք կը-  
քաջալերէ, մանաւանդ երբոր տեսնէ  
թէ տղուն փիլոն խնդրելը բերնէ քա-  
փուք ու անսիրտ կերպով մըն է :  
Վերջապէս առիթ կուտայ տղուն որ  
մէկ օր մըն ալ մեծաւորին առջեւը  
չոքի ու անկէց խնդրէ փիլոնը .  
մեծաւորն ալ որ գովէ անոր փա-  
փաքը երկու խօսքով ու յոյս մը  
սայ թէ մօտ ասէններս փափաքին  
կը հասնի, աշխարհը տղունը կըլլայ  
ուրախութենէն : Իրաւցընէ ալ թիջ  
ասէնէն մեծ հանդիսով՝ երգերով ու  
շարականներով կուտան իրէն նորբն-

ծայուրեան զգեսք, այսինքն կրօնաւորական փիլոնը, մկրտութեան անունը կրփոխեն՝ ուրիշ անուն մը կուտան իր ընտրութեամբը կամ հաւանութեամբը, եւ ինքն որ մինչեւ այն ատեն *ուսանող* կըսուէր, այնուհետեւ կըսուի *նորընծայ Մխարկեան* :

Նորընծայութեան համար որոշուած ժամանակը մեկ տարի է. անկեց ետքը կրնայ կրօնաւորութեան ուխտերը ուխտել : Այն տարին իրաւամբ *փորձութեան տարի* ըսուէր է. վասն զի մեծամեծ փորձութիւններով կըսագնապի խեղճ պատանին ներսէն ու դրսէն : Ներսէն իր ընտրելու վիճակին վրայ կըմտածէ անպարտ. քերէս քանի որ մտածէ՝

այնչափ աւելի փափաքը կաւել-  
նայ՝ որ մը առաջ այն վիճակին  
հասնելու . բայց թերեւս նաեւ մե-  
ծամեծ դժուարութիւններ կը տեսնե-  
առջեւը . թերեւս իր կարողութենէն  
վեր առգելքներ կը գտնէ վախճանին  
հասնելու . սակայն ինչ ընէ, որո՞ւ  
ըսէ : Յնողացը թնկը գրէ . — բայց  
թո՛քերը մեծաւորին ու վերակացու-  
ին ձեռուրներէն պիտի անցնին .  
ինչպէս կրնայ սրտին տազնապը  
անոնց մէջ բացատրել : Վերակա-  
ցուին ըսէ . — բայց կը վախնայ  
որ պատասխան առնու թէ « Հապա  
« ինչո՞ւ փիլոն խնդրեցիր այնչափ  
« փափաքանօք, մինչեւ որ հասար  
« բաղձանացդ առօք փառօք . հին  
« մարդոյն անուրը ձգեցիր, նոր

« անունն առիր . հիմա նորէն հինը  
« պիտի առնուս . . . ուսանող ու աշ-  
« խարհական էիր , նորընծայ ու  
« սիրացու եղար . հիմա նորէն աշ-  
« խարհը պիտի դառնաս . . . վրայ  
« յայտնապէս կրօնաւորական վի-  
« ճակի կոչում կրեստնուի , այդ  
« կոչումը ինչպէս չլսելու պիտի  
« զարնես . վանքին մեջ մեծէն մին-  
« չեւ պզտիկը կըսպասեն որ քու  
« ուխտադրութիւնդ տեսնեն , ետ եր-  
« քայդ որ տեսնեն ' ինչ պիտի  
« ըսեն . . . » Ասոնք կըմտածէ թերեւս  
խեղճ տղան , ու սրտին տալիս պը  
վերակացուի ալ չյայտնէ :

Այս ներքին տալիս պը չըլլան  
ալ նե , դրսէն քաշածներն ալ ա-  
նոնցմէ շատ վար չեն մնար : Վերա-

կացուն նորընծային բնաւորութիւնը փորձեմ ըսելով՝ շատ անգամ իմարական հրամաններ կուսայ կամաւ, որպէս զի տեսնեք թէ տղան *կոյր հնազանդութիւն* ունենայու չափ անմիտ է, կամ թէ գոնե կոյր հնազանդ երեւնայու չափ կեղծաւոր է : Վրան գլուխը երբեմն աղտոտ, երբեմն հին ու մին հագուստներով քայել կըթողու որ տեսնեք թէ կամաւոր աղքատութեան յարմար է, կամ թէ գոնե ազանութիւնն ու փցունութիւնը աղքատութեան վարագուրովը ծածկելու չափ ճարտար է : Երբեմն ալ ուրիշներուն վրայ զինքը լրտես կըդնե որ տեսնեք թէ իր աչքին գերանը մոռնալով՝ ուրիշի աչքին շիւղը փնտռելու յարմար է .

սեսնէ թէ կրնայ զիները այնչափ  
ասելի ընել ընկերներուն որ անոնց  
երեսն իյնալով՝ չկարենայ իր սագ-  
նապն ու մսածուրիւնը յայտնել  
անոնց, ու միայն իրեն դիմէ, իր  
խօսքերէն դուրս չելլէ :

Նորընծայութեան սարին այս  
կերպով որ կըլմըննայ, տղան սե-  
ղանասան մեջտեղը չոքած, բոլոր  
հասարակութեան առջեւ յսակ  
ձայնով պիտի ըսէ թէ « Ահա այսօր  
« նորընծայութեանս ասենք լմըն-  
« ցաւ, եւ ես բոլորով սրտիւ կըփա-  
« փաքիմ ուխտել : » Մեծաւորը  
միաբանութեան կողմանէ քանի  
մը խօսք ըսելով կըգովէ նորըն-  
ծային փափաքը, բայց ասէն կու-  
սայ իրեն որ դեռ լաւ մը մսածէ

ընտրելու վիճակը : Յայտնի է թէ  
նրչափ ալ մտածէ տղան , թէ որ  
միտքը տարակուսանաց մեջ է՝ այն  
հրապարակական խնդրուածքը ի-  
րեն համար նոր կապ մը եղաւ .  
ուստի կրօնաւոր չըլլամ ըսելու հա-  
մարձակութիւնը աւելի ալ կերբայ  
վրայեն :

Կանցնի ըսնի մը ամիս , վերա-  
կացուն կըվկայե վանական ժողովի  
մեջ , այսինքն վանքին մեջ գրե-  
նուող բոլոր միաբանից առջեւ ,  
(նորընծայեն ծածուկ ,) թէ այս ա-  
նուն պատանին կրօնաւորութեան  
փափաք ու յարմարութիւն ունի ,  
եւ այսպիսի բնաւորութեան կամ  
կատարելութեանց տէր է . եւ հասա-  
րակաց բուժարկութեամբ կընտրուի :



Թիսս քիչ անգամ կըպատահի որ վերակացուն բարի վկայութիւն չսայ իր աշակերտին համար, եւ կամ ուրիշները վրան մեծամեծ պակասութիւններ տեսած ըլլան դիպուածով ու ժողովոյն մէջ յիշեն, անով տղուն ընտրութիւնը չյաջողի : *Գիտուածով* տեսած ըլլան ըսի, վասն զի ճիշդ վերական անգուր ու վնասակար կանոններուն մէկն ալ այս է որ ուսանողը եւ նորընծայը, եւս եւ ուխտայը եւ նորընծայ քահանայը, քանի որ վերակացուի ձեռք են, այսինքն տասը՝ տասուերկու տարի, իրենց վերակացուէն ու դաստակէն ի զայս ուրիշ մարդու հետ պիտի չխօսին նոյն իսկ վանքին մէջ : Ասով, քող ուրիշ վնասները, նո-

ըրնծայր մարդու հետ վարուիլ ամենեւին չեն սորվիր, ու սովորաբար միամիտ, թմրած, խրատն ու մարդասեաց բնութիւն մը կը ստանան :

Ժողովական ընտրութեան ակտիւք մեծ ուրախութիւն է նորընծային, վասն զի անով սիրտը կը հանգչի ու վիճակը կորոշուի, մանաւանդ երբոր ինքնայօժար փափաքանօք կրօնաւորութեան կը բաղձայ. բայց հարկաւ նոր կապ ալ է, եւ թէ որ ուզէ ուխտադրութենէն ետ կենալ՝ նոր դժուարութիւն : Անկեց ետքը շատ ատեն չանցնիր, շաբաթ մը կը քրութիւն կը մտնէ նորընծան. այն ետքը օրուան մեջ վերակացուէն ի գտն ուրիշ մարդու հետ չխօսիր, այսինքն եւ ոչ իր ընկերացը եւ կամ

հարազատ եղբօրը հետ՝ թէ որ ունի,  
որպէս զի միայն հոգեւոր ընթերց-  
մանց ու խրատներ լսելու զբաղի եւ  
ուխտադրութեան պատրաստութի :  
Եօթներորդ օրը վերակացուին հետ  
կերթայ մեծաւորին, ու առջեւը  
ծուկ չորած՝ սորէն կըյայտնէ թէ  
կրօնաւորական ուխտերն ընելու  
փափարքին վրայ հաստատ է : Նոր  
խոստմունք, սոր կապ, եւ թերեւս  
սոր ներգործութիւն կեղծաւորու-  
թեան : Մեծաւորն ալ կըբարեմաղթ  
սղուն որ Աստուծոյ շնորհացը մեջ  
մնայ, եւ ասէն կուտայ սորէն մտա-  
ծելու՝ մինչեւ երկրորդ օրը : Առա-  
ւօտը սորէն երկու անգամ կերթայ  
սղան մեծաւորին ու նոյնպէս կը-  
յայտնէ ուխտադրութեան փափարքը,

Եւ անոր օրհնութիւնը կընդունի :

Այս ամէն զգուշութիւնները ան-  
սարակոյս շատ խոհական եւ շատ  
իրաւացի բաներ են երբոր նորընծան  
մեծահասակ երիտասարդ է՝ գեր-  
քսանըմէկ տարին անցած, ու աշ-  
խարհք ինչ ըլլալը քիչ շատ հասկը-  
ցած : Իսկ տասնըօթը (երբեմն ալ  
տասնըվեց) տարեկան պատանին, որ  
վեց օթը տարի վանքին չորս պա-  
տէն դուրս չէ ելած, եւ միտքը աչքը  
ձեռքը ոտքը կապուած մնացեր է,  
ինչ կրնայ մտածել, ինչ կերպով ըն-  
տրութիւն կրնայ ընել որ այդչափ  
զգուշութիւններ ըլլուին : Ո՞չ ապա-  
քէն ընդ հակառակն այդ զգուշու-  
թիւններով տղուն ազատ ընտրութիւնը  
աւելի կըկապուի եւ միտքը կըպա-

շարուի : Թե որ յանկարծ մտքէն ալ  
անցնի թէ կրօնաւորական վիճակը  
ինծի համար չէ , միթէ չէք գիտեր  
որ պիտի ջհամարձակի ըսելու :

— Բայց մենք ամեն բան հասկը-  
ցուցինք իրեն , եւ ընտրութիւնը իր  
ազատ կամքին թողուցինք :

— Ամէն բան հասկըցուցինք  
ըսելը խաբէութիւն է , եւ *ազատ*  
*կամք* ըսածնիդ բոլորովին կա-  
պուած է տանըտօքը տարեկան տղու  
մը վրայ որ այդպիսի կրթութիւն  
տուէր է :

Վերջապէս ուխտադրութեան հան-  
դէսն ալ կը կատարուի փառաւորա-  
պէս , եւ նորընծան կը լլայ *կրօնաւոր*  
*Միսիքարեան* : Երանի իրեն թէ որ  
մինչեւ վերջը գոհ ըլլայ իր ընտրած

վիճակէն : Բայց եկու՛ս ու խիստ  
շատ անգամ տղուն ու խատրուքեանը  
վրայ տարի չանցնիր, երբեմն ալ  
ամիս չանցնիր, որ անիկայ երե ոչ  
խօսքով՝ գոնէ գործով յայտնի կընէ  
ինչ արտով այն ընտրութիւնն ըրած  
ըլլալը, եւ այն նոր վիճակը որչափ  
հասկըցած ըլլալը : Բայց ինչ շան,  
եղածն եղած է. վերակացուն չիմա-  
նալու կըզարնէ. կրօնաւորն ալ ա-  
նով միայն կըմխիբարուի որ ազա-  
տեցաւ հոգէն՝ տատամտութենէն՝  
տարտամ վիճակէն, ազատեցաւ վան-  
քէն վճընտուելու վախէն : Այնու-  
հետեւ երե ուսումնասէր է՝ հան-  
գիտ արտով կուտայ ինքզինքը ու-  
սումնասիրութեան, եւ երե դատար-  
կասէր՝ անօգուտ գբադմանց ետեւ

կըլլայ . կրօնաւորութեանը վրայ  
շատ գոհ ալ չըլլայ նե՛ կըսէ մտքէն  
թէ « Եղաւ ըլլալիքը , երէք չորս  
սարի ալ համբերեմ ու քահանայ  
ձեռնադրուիմ , եւ ըլլամ Մխիթար-  
եան վարդապէս : »

Աստնը եւն ահա Մխիթարեանց  
նորընծայարանին մէջ տուած կըր-  
թութեան հիմունքը . ուստի կըհար-  
ցընենք թէ ասկէ աւելի ինչ հնարք-  
ներ կրնային բանեցուիլ *դիմակաւոր*  
միաբաններ պատրաստելու համար :  
Գարձեալ կըսենք . նորընծայարանի  
կրթութեան մէջ ուղիղ եւ գովելի  
սկզբունքներ շատ կան , եւ նոյն իսկ  
վերոյիշեալ պակասութիւնները թե-  
րեւս մէյմէկ աղէկութիւն անգամ  
սեպուին չափահաս մարդկանց

համար . բայց դեռ անասակ պա-  
սանեկաց կեղծաւորութիւն սորվե-  
ցրնելովնին ամենավնասակար ըլ-  
լալունն սարակոյս ջկայ : Առէկ որ  
այս ամենայն կարգերն ու կանոն-  
ները հայկական մտքի ծնունդ չեն ,  
հասպա ճիգվիքներուն կեղծաւորու-  
թեանը , որոց էւ ճիշդ կըյարմարի  
Քրիստոսի Տեառն մերոյ ըսածը թէ  
« Վնայ ձեզ դպրաց էւ փարիսէցւոց  
« կեղծաւորաց . զի յածիր ընդ ծով  
« էւ ընդ ցամաք առնել էկամուս  
« (աշակերտ) մի . էւ յորժամ լինի-  
« ցի ' առնէք զնա որդի զենեկի  
« կրկին էւս ըան զձեզ : »



Բ. ԿՈՅՐ ՀՆԱԶԱՆԿՈՒԹԻՒՆ

---

Հնազանդութիւնը քրիստոնէական է և կրօնաւորական սպարք մըն է, և զեղեցիկ առարքիւնութիւն . առանց ասոր ոչ մարդկային ընկերութիւն կը ըլլայ, ոչ միաբանութիւն կը կազմուի, և ոչ կարգ կանոն ու օրէնք կը ստանուի : Բայց այս հնազանդութիւնը բանաւոր է և կամաւոր պիտի ըլլայ որ արդիւնք ունենայ Աստուծոյ և մարդկանց առջեւ :

Ճիգ՝իբ մեծաւորը այնպէս չէ. կը-  
պահանջէ որ իր հպատակները  
*կուրորէն* հնազանդին իրեն, այս-  
ինքն հրաժարին իրենց բանակա-  
նութենէն՝ որ մտքերնուն աչքն է,  
մարդկութիւննին ձգեն ու մէյմէկ  
անբան անասուններ դառնան, որ-  
պէս զի իր բարի ու չար հաճոյիցն  
ու խելքին փշածին ծառայեցրնէ  
զանոնք առանց դժուարութեան :

Յայտնի է թէ այս բանս նրչափ  
հակառակեասուածային էւ մարդ-  
կային օրինաց, էւ նրչափ վնասա-  
կար մարդկութեան ու քրիստոնէու-  
թեան : Վասն զի *կոչր հնազանդ*  
ըսուելու համար հարկ է որ կրօ-  
նաւորը իրեն տուած հրամանին  
պատճառները ոչ հարցրնէ, ոչ քննէ

Եւ ոչ զիսնալ ուզէ . հապա պէտք է  
որ խելք բանեցրնելը իրեն յանցանք  
համարի . մեծաւորին խելքը (կամ  
անխելքութիւնը) իր խելքին տեղը  
դնէ . եւ ինքզինքը բռնութեամբ  
համոզելով թէ ըրած բանէն ինչ գէշ  
հետեւանք ալ էլլէ՝ յանցանքը իրեն  
չէ . այլ մեծաւորին կերբայ . իր  
սիրտը հանգիստ պահելու կաշ-  
խասի :

Ճիզվիրքը , եւ անոր հետեւող Մխի-  
րարեանը , դեմ կելլեն այս խօսքիս՝  
ըսելով . « Ոչ , այդպէս չէ , այլ եր-  
« բոր առած հրամանոյ յայտնապէս  
« մեղանջտկան բան է՝ պարտական  
« չես հնազանդելու : » — Շնտ  
բարի . բայց որովհետեւ կատարեալ  
հնազանդը , կոյր հնազանդը , նախ

Եւ առաջ պարտական է իրեն տուած  
 հրամանները ամենեւին չքննել ,  
 ինչպէս կրնայ հասկընալ թէ այս  
 կամ այն հրամանն ալ մեղանջա-  
 կան բան է թէ անմեղ : Ո՞չ ապա-  
 րէն յայտնի հակասութիւն է *կոյր*  
*հնազանդութիւն* պահանջելը , այս-  
 ինքն աչքդ գոց քալէ ըսելը , ու  
 միանգամայն ապապրելն որ չըլլայ  
 թէ փոսի մեջ իյնաս... Եւ այս հա-  
 կասութիւնը ո՞վ չտեսներ՝ էրէ ոչ  
 այն կամաւորապէս անբանացեալ  
 ճիգովիքն որ իր սանմանադուրեան  
 հայնոյական մեկ խօսքը շտկէ շի-  
 սակ կառնու , եւ իր մեծաւորը Աս-  
 տուծոյ տեղ կըդնէ . ալ այնուհետեւ  
 ինչ անօրէն հրամաններ ալ ընդու-  
 նի անկէց , Աստուած ըսաւ ըսելով

համարձակ ի գործ կրդնէ, ու իր սիրսը հանգիստ կըպանէ :

Այս սկզբունքը մեկ միաբանութեան մը մեջ տիրելէն ետեւ, միթէ զարմանք է որ ամեն տեսակ անգգամութիւն, անօրէնութիւն, լրտեսութիւն, դաւաճանութիւն, խարդախութիւն, ամբարշտութիւն, սնեւում կործանմունք, տերութեանց մեջ խռովութիւնք, եւ ամենայն ընկերական վիճակի վրդովմունքներ պատահին անոր ձեռքովը, ինչպէս որ պատահեր են ճիգվիթներուն ձեռքովը : Ուստի եւ վայրապար ջէ այն խօսքն որ Եւրոպացիք առակ ըրած են թէ « ճիգվիթներուն ընկերութիւնը թուր մըն է. կորը Հռովմ է (ուր որ մեծաւորնին կրնասի),

« Եւ ծայրը ամեն Տեղ : » Իրաւ է  
որ Միսիթարեանը դէռ այս աստի-  
ճանի կասարելութեան չէն հասած  
բայց բռնած ճամբանին , մանա-  
ւանդ քանի մը սարիէ ի վեր , շիսակ  
հոն պիտի Տանի ' եթէ սահմանա-  
դրութիւննին չփոխեն :

---



Կրօնաւորական միաբանութեան մեջի միաբաններուն համար Տեսակ մը ազգասօհմ' Տեսակ մը ընտանիք սեպուիլը զարմանք չէ, վասն զի մանկական հասակէն մինչեւ ի ծերութիւն անոր մեջ կըմեծնան, կապրին, կըծերանան ու կըմեռնին. ուսի եւ իրաւամբ գովելի կասարելութիւն մը կրնայ համարուիլ կրօնաւորի մը հասարակասիրութիւնը, այսինքն միաբանութեանը սիրոյն ու զարգացմանը համար աշխատիլը :

Բայց երբոր այս կասարելութիւնը արդարութեան սահմանէն դուրս կելլէ, երբոր ասուածային պատկերանաց դեմ կուգայ, երբոր քրիստոնեական եղբայրութեան կրհակառակի, ի հարկէ վնասակար եւ զարշելի պակասութիւն մը կը դառնայ: Եւ սակայն ճիշդփրական սահմանադրութեան ուժովը Միսրաթեան միաբանութեան մեջ այլ քիչ շատ մտած է այս պարսաւելի հասարակասիրութեան հոգին:

Օրինակի համար, ասուածային եւ եկեղեցական պատկերանի է որ մարդս ինչ վիճակի մեջ ալ զտնօրէն պարսական է ծնողացը իր ձեռքէն եկած ամէն օգնութիւնն ընել, մանաւանդ երբոր կարօտ, ծեր, հիւան-



դո՞ս ու չքաւոր են : Ի՞նչ ըսելու է  
այն կրօնաւորին որ ես իմ հասա-  
րակութեանս պիտի ծառայեմ ըսե-  
լով՝ մինչեւ քսան երեսուն տարի իր  
տեսութեան կարօտվը ծերունի ծնօ-  
ղացը սիրելի հաղեցրնէ մաշեցրնէ,  
ու քերէս այն կարօտյն սասկու-  
թենէն անոնց կենացը կարճընա-  
լուն ալ պատճառ ըլլայ : Ի՞նչ ըսե-  
լու է այն կրօնաւորին որ երկու  
ստակ ձեռքս որ անցնի՝ վանքս պիտի  
յուզարկեմ ըսէ, ու իր ծնողքը՝ որ  
իրեն կեանք տուեր ու վրան այնչափ  
խնամք ցուցուցէր են՝ օրուան ապ-  
րուսին կարօտ քողու իրենց ծե-  
րութեան ատենը : Ո՞չ ապարէն ան-  
գութ եւ անմիտ կեղծաւորութիւն է  
անոր ըրածը՝ երբոր իր ծուռ խղիճ-

մտանքը արդարացրնել ուզելով էլլէ ըսէք « Հայր իմ եւ մայր իմ թողիմ գիս, եւ տէր իմ ընկալաւ գիս : »  
**Չ**ուզէր մտածել որ ոչ թէ իր խեղճ հայրն ու մայրը թողէր են գիները, հապա իները թողէր ու մոռցէր է գանոնը անհնարին անգթութեամբ, եւ սուրբ գրքին խօսքը կամաւ կրժոճ որ իր սիրտը հանգչեցրնէ :

Գարձեալ, եթէ քրիստոնեական եղբայրսիրութիւնը աշխարհիս երէտէն աներեւոյթ ըլլար, ապաքէն կրօնաւորական միաբանութեանց մեջ փնտնելու էր : Ի՞նչ ըսելու է ուրեմն այն կրօնաւորներուն որ հասարակասէր երեւնայու պատրուակաւ՝ թէ իրարու եւ թէ օտարաց ամէն տեսակ թշնամութիւնու չարիք հաս-

ցընելու կաշխատին : Իրարու դեմ՝  
մեկզմեկ լրտեսելով, բամբասելով,  
գրպարտելով, մեկմեկու անունը  
աւրելով՝ արդիւնքը փճացընելով .  
եւ օտարաց՝ մանաւանդ ուրիշ կրօ-  
նաւորական միաբանութեանց դեմ  
անհաշտելի ատելութեամբ ու սաս-  
տիկ նախանձով հակառակութիւն-  
ներ ընելով : Եթէ հասարակասե-  
րեւնայեան առաջ ջանային արդա-  
րասեւ ու եղբայրասեւ ըլլալ, ո՞չ  
սպարէն իբրեւ իրենց համար գրուած  
լաւ պիտի հասկընային Աւետարա-  
նին մեզ Քրիստոսի Տեառն մերոյ  
ըսած այն խօսքը որ երբ աշակերտ-  
ներն ըսին իրեն թէ « Վարդապետ,  
« տեսաք զոմն զի յանուն քո դեւս  
« հանեւ, եւ զմեր կնի ոչ շրջեւ, եւ

« արգելար զնա . » պատասխանեց  
անոնց . « Մի արգելուք զնա . զի ոչ  
« որ է որ առնէ զօրուքիւնս յանուն  
« իմ , եւ կարիցէ հայհոյել զիս : »

Պարձեալ , կրօնաւորը պիտի սիրէ  
իր միաբանութիւնը Ասուծոյ հա-  
մար , ազգին համար , իր հոգւոյն  
փրկութեանը համար . եւ ոչ թէ Աս-  
սուծոյ փառքը , ազգին օգուտը եւ  
իր խղճմանքը պիտի զոհէ միաբա-  
նութեանը համար : Ի՞նչ ըսենք ու-  
րեան այն տգէտ կրօնաւորին կամ  
չարամիտ կեղծաւորին որ չըլլայ թէ  
հասարակութեանս վնաս մը պա-  
տահի ըսելով՝ իր խղճմանքը ծալէ,  
սիրոյ պատուիրանները ոտքի տակ  
առնէ , իր ազգը նախատէ , բամ-  
բատէ , մատնէ , բշտամանէ , որով

Եւ հոգւոյն փրկութիւնն անգամ  
վսանգի մեջ դնէ :

Եթէ միաբանութիւն մը այսպիսի  
հասարակասքներէ բաղկանայ, ո՞չ  
նապաքէն աւելի արժանի է այր աւա-  
զակաց ըսուելու քան թէ վանք եւ  
միաբանութիւն : Եւ սակայն ճիշ-  
վիքներն ու անոնց հետեւի ուզող  
Միսրաբեանք դրած են մտքերնին  
թէ միաբանութիւննին հաստատ  
հողները այնպիսի հասարակասք-  
ներն են :

Միսիթարեան միաբանութեան մեջ հասարակասիրութիւնը որչափ որ շատ է, պէտք էր որ հասարակասիրաց արդիւնքն այլ այնչափ աւելի ճանչցուէր. բայց այնպէս չէ. ընդ հակառակն մասնաւորաց արդիւնքը ուրիշներուն աչքին կարծես թէ փուշ կը ըլլայ, եւ մեծաւորէն սկսեալ ամէն մարդ կընայի որ դիմացինին արդիւնքը ոչինչ կամ պզտիկ էրեւնայ : Պէտք էր որ այս այսպէս ըլլար : Իրաւցընէ Աւսուած միայն կընայ վարձատրել ըստ արժանւոյն ընտիր եւ հասարակասէր

կրօնաւորի մը տառապանքը, որ  
ամէն բան ի փառս Աստուծոյ եւ  
յօգուտ ընկերին կրնէ. բայց ասի-  
կայ ո՞չ ապաքէն իւրաքանչիւր կրօ-  
նաւորին իր մտածելիքն է : Միթէ  
ուրիշները, եւ մանաւանդ մեծա-  
ւորը, պէտք չէ որ ճանչնան իւրա-  
քանչիւր միաբանից արդիւնքը, եւ  
ըստ այնմ գովեն զանոնք ու քաջա-  
լերեն : Չէ. կարծես թէ միաբանած  
են ըսելու թէ « Մենք գիներք Աստու-  
« ծոյ համար աշխատացուցեր ենք,  
« Աստուծմէ թող սպասէ իրեն աշ-  
« խատանքին փոխարէնը : »

Միաբաններէն մեկը հայրենիք,  
ընտանիք, հարստութիւն, հանգստու-  
թիւն, ամէն բան թողած, տարինե-  
րով կաշխատի վանքին մեջ գիշեր

ցորեկ արժարքին կամ գրաւոր գործերու : Անդին մեկ ուրիշը երկու երէք տարին մէյմը հայրենիքը կերթայ, ազգականները կը տեսնեն, ըստակ կը դիպէ, ամէն հանգստութիւն կը վայելէ, եթէ սարապ ալ չկենայ՝ ըստ քմաց իւրոց աշխատելով օրերը կանցընէ : Արդ ինչ կըսես այն կրօնաւորական միաբանութեան յորում այն երկու միաբանից արդիւնքն ու ապարդիւնքը մեկ մեպուին : Ինչ կըսես այն մեծաւորին որ նշանաւար սարագայի մը մեջ երեսդ ի վեր կանչէ բարկութեամբ թէ « Վանքին մեջ արդիւնք ապարդիւնք չկայ, ամէն մարդ Աստուծոյ համար կաշխատի : » Հարկաւ պիտի ըսես թէ այն միաբանութեան մեջ, այն մե-



ծաւորին սրտին մեջ՝ արդարութիւն  
էւ իրաւունք ամենեւին չկայ . եւ  
ուր որ արդարութիւն չկայ՝ ուրիշ  
ինչ առաքինութիւն կրնայ գտնուիլ .  
ուր որ առաքինութեան գոպտոս տա-  
լէն կըվախցուի՝ հոն ինչ յառաջա-  
դիմութիւն կրնայ յուսացուիլ : Այն  
բողունք . կրտսնէս որ մեծաւորը  
կըպահանջէ որ ամեն մարդ երախ-  
տագէտ ըլլայ իրեն . երախտագիտու-  
թեան հիմք արդարութիւն է . երբոր  
ինքը արդարութիւն էւ արդիւնք  
չճանչնար . ինչ իրաւամբ ուրիշներու  
էն երախտագիտութիւն կըպահան-  
ջէ :

— Բայց ինքը մեծաւոր է . ինչ  
արդիւնք ալ գործուի ուրիշներուն  
ձեռքովը՝ իրեն պէտք է ընծայուի :

— Այո, այս ճիգվիրական սկզբունքն է անա այնպիսի նշովելի անիրաւութեան աղբիւրը . որով՝ ինչպէս վերն ալ յիշեցինք՝ գործողը մեծաւորն է միայն, իսկ նպատակներն իրեն կամացն ու խելքին մէյմէկ ապարդիւն գործիք, մէյմէկ անբան անասունք...

Ուրիշ պատճառ ալ կայ այսպիսի անիրաւութեան, բայց երկրորդական է. այսինքն թէ կրօնաւոր մը եթէ իբրեւ արդիւնաւոր մարդ գովուի ու փառաւորուի, ուրիշ միաբանից նախանձը կրնայ շարժել :

— Բարի նախանձ թէ չար : Եթէ բարի, եւս առաւել հարկ է ուրեմն վարձատրել արդիւնքը ըստ արժանւոյն, իսկ եթէ կրօնաւորական միա-

բանութեան մը մեջ չար նախանձեւ  
այնչափ կը վախցուի որ արդարու-  
թիւն եւ առարքինութիւն գործելը  
վսանգաւոր բան մը կերելնայ, չը-  
սես որ այն միաբանութեան վերջը  
հասեր է :

Ուրիշի արդիւնքը չճանչցուելուն  
բնական հետեւանքն է աջառութիւն  
եւ խտրութիւն անձանց՝ ըստ հայրե-  
նեաց եւ ըստ վիճակի : Եւ քեպէս  
այս անիրաւութիւնը քիչ է Միսի-  
բարեան միաբանութեան մեջ, բայց  
ափսոս որ ամենեւին չկայ ջէնք  
կրնար ըսել :

Միաբանութեան նոր սկսած ա-  
տենները մեջի անձանց մեծ մասը  
դրսեցի էին, այսինքն Հայաստանէն  
ու փոքր Ասիոյ այլ եւ այլ քաղաք-

ներէն ժողովուած . վերջերս դրսեցիք  
քիջցան մեջն ու Պօլսեցիները շատը  
ցան : Վանքին մեջ տուած կրթու-  
թիւնը որչափ ալ միօրինակ է ան-  
խտիւր ըլլայ, դրսեցւոց ու Պօլսեցւոց  
բնաւորութեանը մեջ եղած տարբե-  
րութիւնը միշտ կըմնայ : Եթէ դրսե-  
ցիք աւելի ձգնասէր ու երկայնամիտ  
են, աւելի դիմացկուն ու ջարքաշ,  
աւելի անձնուրաց ու բարեսիրտ,  
աւելի հանճարեղ ու բարակամիտ,  
Պօլսեցիք ալ աւելի սրամիտ են ու  
բարեմիտ, աւելի փափկասուն ու  
արթուն, աւելի երեւակայոտ ու  
եռանդուն : Արդ փոխանակ ասոնց  
ամենուն ալ լաւ յատկութիւնները  
անխտաբար յարգելու՝ խտրութիւն  
մը կերեւնայ յայտնապէս միաբա-

նուրբեան մեջ այն ժամանակներն որ անոր կառավարութիւնը Պօլսեցւոց ձեռքը կանցնի . որով կրօնաւորական պարսուց կասարումը կարծես թէ անէի դրսեցւոց վրայ կրծանրանայ : Քրէթէ ամէն դժուար ու վճանգաւոր աշխատանք անոնց վրայ կըմնայ , դիւրիները Պօլսեցւոց . հայրենիքէ հեռու , ազգականաց տեսութենէն միմիջեւ ի սպառօրեկ մնալը դրսեցւոց , իսկ հայրենիք դառնալն ու ազգականաց տեսութեամբ միտքարուիլը Պօլսեցւոց . արտաքին ու գրէթէ ծառայական շորժեր կասարելը դրսեցւոց , իսկ գրաւորական ու հանգիստ պաշտօնները Պօլսեցւոց :

Այս անիրաւութիւններն ու աջա-

ուութիւնները անշուշտ կը պակսէին՝  
թէ որ մեկդի ձգուէր այն ճիգովի թա-  
կան սկզբունքն որ ասէն ասէն կը-  
գօրանայ միաբանութեան մեջ. այս-  
ինքն թէ միաբանութիւնը իր ազդե-  
ցութիւնը ազգին մեջ տարածելու  
համար պիտի ջանայ որ Տաճկաս-  
տանի մայրաքաղաքին եւ ուրիշ  
երեւելի քաղաքներուն բնակիչնե-  
րէն առած անձինքը աւելի առաջ  
քաշէ ամեն բանի կողմանէ .

---

Միսիրարեան միաբանութիւնը այնչափ հարուստ չէ որչափ որ կը կարծուի. եւ մեզը կըզգսնուին մարդիկ որ ըստ իրասու սրբոց Հարց եւ վարդապետաց Եկեղեցւոյ կըհասկընան թէ կրօնաւորական միաբանութեան մը հարցսնալը անոր կործանելուն նշան է : Բայց շատին մտքին մեջ ալ ճիգվիթներու սահմանադրութեան այս սկզբունքը սպաւորուած է թէ « Միաբանութիւնը « որչափ հարուստ ըլլայ՝ այնչափ « աղէկ է, եւ ամէն միաբան պիտի « աշխատի որ վանքը հարստացնէ,

« քայց ինքը պէտք է որ աղքատ ըլլայ  
« կամ աղքատ երեւնայ, որովհետեւ  
« աղքատութիւն ուխտեր է : »

Հարցընէս անոնց քէ միաբանութիւնն որ հարցասնայ, այն հարսութիւնը վայելողները միքէ ազգին աղքատներն են . ո՛չ ապարէն միաբանները կը վայելեն . ուր կըմնայ ուրեմն անոնց աղքատութիւնը : Միաբանութեան չափաւոր ու վայելուչ ապրուստը հոգայու աշխատող հասարակասիրաց խօսք չունինք . քայց երբոր մեջի անձինքը գիշեր ցորէկ աշխատին վանքերնին հարցասացընելու . երբոր չքաւոր եւ օրինաւոր ժառանգներուն զրկանք ընելով՝ ետեւ ըլլան կտակով ստակներ ձեռք բերելու . երբոր բարետիրաց



ծախարովն անգամ սպած գրքեր-  
նին հարկ համարին անսանելի  
կերպով սուղ սուղ ծախելու... Ինչ  
իրաւունք կունենան զարմանալու  
որ աշխարհականներէն ու եկեղե-  
ցականներէն առ հասարակ կըբամ-  
բասուին անդադար իբրեւ ազան,  
գօշարաղ, արծաթասէր, կծծի եւ  
ծլաս մարդիկ :

Զ. ՄՇՏՆՁԵՆ ԱՒՈՐ

ԻՇԽԱՆ ՈՒԹԻՒՆ ԱՅՔԱՅԻՆ

—

Ճիգլիթքներուն սահմանադրու-  
թեան մեկ մեծ պակասութիւնը,  
կամ թէ իրենց խօսքին նայելով՝ մեծ  
կասարելութիւնը այս է որ իրենց  
մեծաւորին իշխանութիւնը մշտնջե-  
նաւոր է: Անոնցմէ առ յ ծ էն Մխի-  
թարեանը ալ իրենց աբբան մշտնջե-  
նաւոր ընելու կանոնը:

Եթէ իրաւցրնէ ամէն մեծաւոր  
ալ իր անուանը եւ պաշտօնին հա-  
մեմաս Հայր ըլլար միաբանից, եւ  
հայրաբար խնամէր անոնց հոգեւոր  
եւ մարմնաւոր պիտոյքը, այդ կա-

նոնը վնասակար ըլլալու տեղ օգուտ-  
ներ անգամ կրնար ունենալ: Բայց  
երբոր մեծաւոր մը տիրապետական  
ու փառասիրական հոգւով լցուած՝  
իր ձեռքին տակի միաբանները գե-  
րիի պէս կը կառավարէ, երբոր ճիշ-  
վիրական սահմանադրութեան սան-  
ձովը իր կրօնաւորները իբրեւ զձիս  
եւ զջորիս ծառայեցընելու կաշ-  
խասի, մեկուն կը սաստէ, մեկային  
կըսպառնայ, եւ ամէն մարդ ինծի  
կուրօրէն պիտի հնազանդի, իմ  
ըրածներու ջհաւնելու ոչ ոք պիտի  
ջհամարձակի ըսելով՝ վանքը եւ  
վանականները խռովութեամբ ու  
սժգոհութեամբ կըլեցընէ, ինչպէս  
յայտնի կըլլայ կանոնին վնասակա-  
րութիւնը. որչափ ցաւայի է մտա-


ծելն որ միաբաններուն ճարը հասած՝ մեծաւորին օր մը առաջ մեռնելուն կըփափարքին որ ազատին ձեռքէն :

Միսիթարայ մինչեւ ցմահ մեծաւոր մնալը բնական էր եւ ամենայն կերպով իրաւացի, թերեւս եւ հարկաւոր. բայց անոր յաջորդ Մելքոնեան Ստեփանոսը էթէ մշտնջենաւոր աբբայութեամբ չճոխանար, շատ հաւանական է որ Թրեսացի կամ Վեննական Միսիթարեանց բաժանումը չէր պատահեր :

Ազոնց Ստեփանոս աբբային խոհական կառավարութիւնը առիք չտուաւ միաբաններուն մտածելութեւն արդեօք անոր իշխանութիւնը մշտնջենաւոր ընելը լաւ էր թէ առ-

ժամանակեայ : Իսկ անոր յաջորդ  
Սոմայեան Սուրբիաս աբբան քեպես  
էւ իր նախորդին կասարելուքիւն-  
ներն ալ ունէր , բայց վերջի տասնը-  
հինգ տարին այնպիսի ծանր հիւան-  
դութեամբ անցուց որ անով միա-  
բանութեան գործերը սովորականէն  
ալ աւելի դանդաղութեամբ քայլեցին  
ու էտ մնացին :

Այժմու մեծաւորին իշխանու-  
թեանն ալ մշտնջենաւոր ըլլալուն  
օգուտներն ու վնասները ժամանակը  
պիտի յայտնէ . բայց մենք կանոնին  
վնասակարութիւնը ցուցընելու հա-  
մար նոր նոր ապացոյցներու կարօտ  
չենք :



Գ.

ՔԱՆԻ ՄԸ ՍԿԶԲՈՒՆՔ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

---

Մեզի կերեւնայ թէ մեծ անիրաւութիւն ցրած կըլլայինք՝ էթէ Միսիբարեան միաբանութեան այս ամեւնայն եւ ասոնց նման պակասութիւնները մեջի անձանցը միայն տայինք, մինչդէռ յայտնի գիտենք որ անոնց բուն աղբիւրն ու առաջին պատճառ կաթոյիկութիւնն ու ճիգ-վիթական սահմանադրութիւնն է, ինչպէս որ ցուցուցինք: Որչափ որ հեռացեր են ազգային հայկական

պարզ եւ ուղիղ սկզբունքներէն ,  
այնչափ ընթացքնին ծուեր ե ու  
նէս գնէսկ կրծուի, եւ կրօնաւորու-  
թեան սկզբնական հոգիէն անգամ  
կրխոսորի որ սուրբ Աւետարանին  
վրայ հիմնուած է :

Ուրուագիծնիս վերջացրնելէն ա-  
ստաջ քանի մը սկզբունք ալ մեջ  
բերենք որ ճիշդվիթներուն՝ ուսի եւ  
Մխիթարեանց մեջ տրած են իբրեւ  
աւետարանական պատուերնէր ու  
խրատներ, քեպէս եւ դեմ ընդդեմ  
հակառակ են Աւետարանին հոգւոյն  
ու խօսքերուն :

Ա. « Միաբանութիւնը ինչ որ  
« կրնէ, ինչ որ կրխորհի, ինչ որ կո-  
« ռոշէ, ադէկը այն է, աստուածա-  
« հաճոյ բանը այն է. մասնաւորաց

« խօսքը պիտի ջըլայ » կըսեն :  
Հարցուր թէ ինչէն յայտնի է ասոր  
այդպէս ըլլալը . պատասխան կու-  
տան թէ Աւեսարանէն . « Ուր իցեն  
« Երկու եւ երէք ժողովեալ յանուն  
« իմ , անդ եմ ես ի մեջ նոցա » կըսէ  
Քրիստոս : Չէն մտածեր ամենեւին թէ  
Քրիստոս Տէրն մեր այն խօսքին մեջ  
յայտնի պայման կըղնէ *յանուն իւր*  
ժողովիլը , այսինքն իրաւցընէ քրիս-  
տոնեական հոգւով , Քրիստոսի  
անուանը համար նեղութիւն ու հա-  
լածանք քաշելով առարեւոյց պէս ,  
Քրիստոսի վարդապետութիւնն ու  
Եկեղեցին պայծառացընելու հա-  
մար՝ տեգերական սուրբ ժողովոց  
հայրապետներուն պէս . Ապա թէ ոչ,  
միթէ աշխարհիս երեսը ասոյիս ան-



դին ժողովուած ընկերութիւնք, եւս  
եւ քրիստոնեայ ընկերակցութիւնք,  
ամենքն ալ անսխալ են. մեկը չը-  
կրնար գտնուիլ որ անոնց գործոյն  
կամ խօսքին կամ մտածութեանը  
մէջ անիրաւութիւն, մոլորութիւն,  
ծռութիւն գտնէ: Օրինակի համար,  
Միսիքարեան միաբանութիւնը ժո-  
ղովով կորոշէ ընդդէմ խղճի եւ ամե-  
նայն արդարութեան որ իրեն ձեռքը  
աւանդուած ազգային վարժարան-  
ներուն վերաեսչութիւնը եւ գրեթէ  
դրամագլուխը Հռովմայ Փրովա-  
կանսային ձեռքը մասնէ. այն որոշ-  
ման դէմ բողոքող քանի մը ան-  
ձինքը ինչո՞ւ յանցաւոր պիտի սե-  
պուին փոխանակ վարձատրուելու.

թայե՛ս եւ Գանե՛կ, մարգարէին չափ  
այ դեռահասակ ըլլան :

Բ. « Ով որ մեծաւորին կրնա-  
« զանդի՛ Թասուծոյ կրնազանդի.  
« ով որ մեծաւորին դեմ կելլէ՛ Թա-  
« սուծոյ դեմ ելած կըլլայ : »

— Ինչէն յայտնի է :

— Աւեսարանէն . « Որ ձեզ լսէ՛  
« ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՛  
« զիս անարգէ » ըսաւ Քրիստոս :

— Այո՛, բայց որո՛ւ ըսաւ . մեծա-  
ւորա՞նց , աբբայի՞ց , իշխանաւորա՞նց ,  
բռնաւորա՞նց... Ո՞չ ապաքէն առաքե-  
լոց ըսաւ այն խօսքը՝ քաջալերելով  
զանոնք որ իր ասուածային վար-  
դապետութիւնը աներկիւղ քարոզէն  
մարդկանց իր համբարձմանէն ետեւ :

Ապա ուրեմն մեծաւորի մը իր հպասակներէն այդպիսի աստուածական պատիւ պահանջելը ըստ ճիգվիթներու սահմանադրութեանը՝ հայհոյական ամբարշտութիւն եւ դիւական ամբարսաւանութիւն է. կրօնաւորին ալ զմեծաւորը Աստուծոյ տեղ դնելով՝ կոչը գկուրայն անոր խօսքերուն մտիկ ընելը մարդապաշտութիւն եւ յիմարութիւն : Ա՛յլ ինչ է *Աստուծոյ սիրոյն համար*՝ կամաւորապէս եւ բանաւորապէս մեծաւորի մը օրինաւոր հրամաններուն հնազանդիւր, ինչպէս որ էկեղեցւոյ մեջ ամեն ասէն զտնուած են ընողներ :

Պ. « Կրօնաւորը հայր, մայր, « եղբայր, քոյր, ամեն բան պիտի « մոռնայ, պիտի թողու, պիտի ու-

« րանայ : Երէ անոնք ունեւոր են ,  
« անոնց ձգած ժառանգութենէն  
« իրեն ընկած բաժինը պիտի պա-  
« հանօք առնու , երէ հարկ ըլլայ  
« նաեւ կռիւներով ու դատասա-  
« նով , ու վանքին յանձնէ . իսկ  
« երէ չքաւոր են , ամենեւին պար-  
« սական չէ անոնց օգնելու ' ոչ  
« վանքին ստրկէն եւ ոչ իր կարգէ  
« դուրս աշխատութեամբ թափած  
« քրտնքին արդիւնքովը . միայն  
« աղօթք կրնայ ընել անոնց համար '  
« որպէս զի սիրով համբերեն աղ-  
« քատութեան , հիւանդութեան ,  
« ծերութեան , եւս եւ մուրացկա-  
« նութեան : »

— Ուսկից առեր էք , նվ նոր Փա-

րիսեցիք, այդ բիւրիցս դասապար-  
սեի անողորմ սկզբունքը :

— Աւետարանէն յորում կըսէ  
Քրիստոս. « Որ ոք էթող գեղբարս  
« կամ զքորս, կամ զհայր կամ  
« զմայր կամ զորդիս կամ զազա-  
« րակս վասն իմ եւ վասն անեսա-  
« րանին, հարիւրապատիկ առցէ,  
« եւ զկեանսն յաւիտեանականս ժա-  
« ուանցեցէ : »

— Ռհ անլուր եւ դիւաննար մեկ-  
նուրիւն : Քրիստոսի խօսքը ոչ ապա-  
քէն անոնց համար է յայտնապէս  
որ իրենց քրիստոնեական սուրբ  
հաւասքը չուրանալով պիտի հար-  
կադրէին ականայ կամօք բաժնուե-  
լու իրենց ծնողքէն, ազգականնե-  
րէն ու սուսցուածքէն, եւ միևչեւ

իբեց կեանքէն անգամ, ինչպէս որ  
քրիստոնէութեան առաջին դարերուն  
մեջ խիստ շատ մարտիրոսներ ըրին  
հրաշայի նահատակութեամբ: Ապա  
քեոջ, ուր թողունք Քրիստոսի տեան  
մերոյ այն սոսկայի վայր՝ որով  
այդպիսի կեղծաւորական եւ անի-  
րաւ սկզբունքի հետեւող Փարիսե-  
ցիները կը շանքահարէ. « Իսկ դուք  
« ընդէր անցանք զպատուիրա-  
« նաւն Աստուծոյ վասն ձերոյ աւան-  
« դութեան: Զի Աստուած ասաց,  
« Պատուեա զհայր քո եւ զմայր, եւ  
« որ չարախօսէ զհօրէ կամ զմօրէ՝  
« մահու վախճանեացի. եւ դուք  
« ասէք. եթէ ասիցէ որ զհայր կամ  
« զմայր. Կորբան — որ է պատա-  
« րագ — զոր յինէն օգտեացիս (այս-

« ինքն քու ինծմէ սպասած օգնու-  
« րիւնդ կամ ստակդ եւ Աստուծոյ  
« ընծայէր եմ կամ ընծայել խոս-  
« տացէր եմ ), եւ ոչ եւս Տայր թոյլ  
« նմա առնել ինչ հօրն կամ մօր,  
« եւ անարգէք զբանն Աստուծոյ  
« ձերով աւանդութեամբն զոր  
« աւանդեցէք : Կեղծաւորք, բարւոր  
« մարգարեացաւ ի վերայ ձեր Եսայի  
« եւ ասէ . ժողովուրդս այս շրթամբք  
« պատուէ զիս , եւ սիրտ իւրեանց  
« հեռացեալ մեկուսի է յինէն . զնւր  
« պաշտեն զիս . ուսուցանեն վար-  
« դապետութիւնս զմարդկան պա-  
« տուիրեալս : » Միքէ ասկէց աւելի  
զօրաւոր հերքումն կրնայ ըլլալ վե-  
րոգրեալ անողորմ սկզբունքին . աս-  
կէց աւելի հիմն ի վեր տապալումն

կրնայ ըլլայ այն ճիգվիրական մեկ-  
նութեան որ սիրած է նաեւ Մխի-  
թարեան միաբանութեան մեջ...

Ո՛ւր բողոներ նոյն իսկ կանոնա-  
գիտաց եւ իրաւաբանից սկզբունքը  
որ կրնաստե՛նք քամարդս կրօնաւոր  
անգամ չկրնար ըլլայ՝ երբոր իր  
ծնողքը բացարձակապէս կարօ՛ս էն  
իր ձեռնհասութեանը : Եւ իրաւքընէ,  
էրէ գիտնային ծնողք քէ իրենց որ-  
դին կրօնաւոր ըլլալովը այն աստի-  
ճանի անգրութեամբ պիտի վարուի  
իրենց դէմ՝ միքէ բող կուտային որ  
վանը երբայ : Եւ ո՞վ կրնայ ըսել քէ  
իրաւունք չունէին՝ բայց էրէ փա-  
րիսեցին կամ ճիգվիրքը :

Գ. « Սասիկ խտնութեամբ ար-  
« գիլուած է որ երկու երէք կրօնա-



« կից եղբարք իրարու հետ մաս-  
« նաւոր բարեկամութիւն եւ ընսա-  
« նութիւն շունենան : » Ինչո՞ւ ըսես  
նէ, — որպէս զի սրտերնին իրարու  
ջբանան, վիշտերնին իրարու յայտ-  
նելով ջմխիբարուին, մեծաւորին  
բռնութեանցը՝ եւ վանքին մեջ եղած  
անկարգութեանց վրայ իրարու աչքը  
ջբանան :

Աղէկ որ այս գարշելի բռնակա-  
լութեան ալ մի միայն աղբիւր ճիգ-  
վիքներու սահմանադրութիւնն է,  
յորում այս Մարտաւէտան առածը  
մեծաւորին մեծ գէնքը եղած է թէ  
« Բաժանեա զի տրեցես : » Պօղոս  
առարեալ զբրիստոնեայս ի սէր եւ  
ի միաբանութիւն յորդորելով՝ մար-  
մնոյ գիտոյն եւ անդամոցը մեկզմեկ

սիբէլը , հոգալը , խնւմէլը օրինակ  
կըբերէ : Իսկ մեր նոր փարիսէցիները  
իրենց միաբանութեան մեջի բոլոր  
անձիւքն ալ կուզեն այնպիսի ան-  
շունչ , անսիրտ , անմիտ եւ անզգայ  
արձան մը կամ խրճիկ մը ձեւացը-  
նել ' որուն անդամները իբարու հետ  
նիւքական քելով մը միայն կա-  
պուած ըլլան , եւ բոլոր քելերուն  
ծայրը մեծաւորին ձեռքն ըլլայ . որ  
անդամին ինչ շարժումնք որ ուզե-  
սալ ' զայն տայ , եւ տեսնողներուն  
աչքը խաբէ :

Ճիգովիքներուն եւ անոնց հետեւող  
կրօնաւորաց այս կանոնին հետե-  
ւանքն է այն առածը որով կըսեն  
Խտալացիք . « Ճիգովիքութիւնը այն-  
« պիսի ընկերութիւն մըն է որ մեզը

« կըժողովուրին մարդիկ առանց մեկ-  
« զմեկ ճանչնալու, կապրին ա-  
« ռանց մեկզմեկ սիրելու, կըմեռ-  
« նին կերքան՝ առանց մեկզմեկ  
« խոճալու : » Սոսկալի առած, եւ  
քերեսս աւելի յարմար ի դժոխս դա-  
սապարտեալ հոգւոց՝ քան թէ որ իցէ  
մարդկային ընկերութեան...

## ՎԵՐՋԱԲԱՆ

---

Երբոր միաբանութեան մը մեջ քիչ շատ գօրանան այնպիսի սկզբունքներ, երբոր կեղծաւորութիւնը հարկաւոր կասարելութիւն մը ճանչցուի, երբոր մեծաւորին բռնութիւնը եւ հպասակաց անբանութիւնը անհրաժեշտ կերպով հարկաւոր ճանչցուի միաբանութեան հաստատման ու առաջ երթալուն, երբոր ճիգ-վիթներուն հռչակաւոր առածին

համեմատ « Բարի նպատակի մը  
« հասնելու համար ամենայն միջոց  
« (որչափ ալ ապօրինաւոր ու վնա-  
« սակար ըլլայ) բարի է. » այնու-  
հետեւ միթէ զարմանք է այն միա-  
բանութեան մէջ արդիւնք ապար-  
դիւնք չճանչցուիլը .

Զարմանք է որ յիսուն տարի միա-  
բանութեան օգտին համար կէտները  
դնելով աշխատած բազմարդիւն  
ծերունի մը, միայն իր երեսին դի-  
մակը մեկդի առնելու լուրջուն հա-  
մար, միայն ազգին իրաւունքը  
պէտք է տեղը երբայ ըսելուն համար,  
միայն մեծաւորին անիրաւ մեկ  
հրամանին պատճառները փնտե-  
լուն համար, անարգ եւ ապարդիւն  
գերիի մը պէս մեկ կողոպուտ՝ նա-

Խասալից եւ դասափէտ՝ գիշեր ասէն  
 ու անձրեւով՝ դուրս վազնուի գի-  
 նուորներով իր անբաւ նեղութեամբ  
 ու սառապանօք հիմնած առաջ  
 տարած վարժարանէն . ետքն ալ տա-  
 րիով անլուր հալածանք ու մեծա-  
 մեծ գրկանքներ քաշէ մեծաւորին ու  
 անոր արքանեակներուն կողմանէ :

Զարմանք է որ տասը տարի միա-  
 բանութեան համար գրով եւ բանիւ  
 աշխատած մէկ անձը՝ միայն երեսին  
 դիմակը վար առնել ուզելուն հա-  
 մար , միայն իր կարօտեալ ծնողացը  
 իր կարգէ դուրս աշխատութեամբը  
 ասէն ասէն ոգեպահիկ մը ճարելուն  
 համար , միայն մեծաւորին *գորու-  
 քենակցան* անիրաւ հրամանին մտիկ  
 րնել չուզելուն համար՝ պաշտօնէն

ձգուի, ու միաբանութենէն դուրս  
վորհնուի :

Զարմանք է որ երեսուն տարիի  
չափ միաբանութեան մեջ արծա-  
րագին գերիի մը պէս ծառայող  
մեկ անձ մը, միայն երեսին դիմակը  
հանել ուզելուն համար, միայն իր  
ազգին իրաւունքը արդարութիւնը  
պաշտպանել ուզելուն համար, դուրս  
ձգուի միաբանութենէն իբրեւ հեր-  
ձուածողներու պաշտպան ու մոյճ-  
րամիս :

Զարմանք է որ արդիւնաւոր ու  
տաղանդաւոր մեկ անձ մը միաբա-  
նութեան կողմանէ իբրեւ գործա-  
կալ էլ դեսպան յուղարկուած ըլ-  
լալով, ըրած դեսպանութենէն ետեւ  
իր արդար կրօնակցացը դէմ սուս

վկայութիւն տալ չուզելուն համար,  
յանդիմանութիւն լսէ վանական  
ժողովով, ու ձեռքը եղած պաշտօն-  
ներէն դուրս ձգուի :

Զարմանք է որ իր խղճմանքի  
արդար բողոքմանը դէմ սուս խուլ  
ըլլալ չուզող մէկ անձ մը, « Հնա-  
գանդի պատճ է Աստուծոյ առաւել  
քան մարդոյ » ըսելով՝ անիրաւ  
յայտարարութիւններու ձեռք դնել  
չուզելուն համար, իբրեւ ապստամբ  
եւ ինքնահաճ նախասուի ու կշտամ-  
բուի :

Զարմանք է որ մեծաւորը իր  
հպատակներուն միտքը եւ լեզուն  
կաշկանդելու համար՝ ոչ միայն  
վանքը լրտեսներով լեցընէ, այլ եւ  
քաղաքական իշխանութեան արթ-



նութիւնն ու հսկողութիւնը իր բըն-  
նակայութեանը օգնական առնու-  
որպէս զի չըլլայ թէ յանկարծ ծա-  
ծուկ թղթակցութիւն մը պատահի  
իւր հպատակներուն ու անոնց ծնո-  
ղացն ու ազգականացը մէջ...

Չարմանք է որ վանքին մէջի այն  
անձինքը միայն պատուոյ էւ պաշ-  
տօններու հասնին՝ որոնք որ իրենց  
անարգ նախանձն ու ցած անձնա-  
սիրութիւնը պարտըկեն կեղծաւո-  
րութեամբ, ու իբրեւ նախանձայոյզ  
էւ հասարակասէր անձինք ընդդէմ  
արդարութեան էւ անմեղութեան  
պատերազմելով՝ սոսկալի անգթու-  
թեանց էւ շփոթութեանց պատճառ  
ըլլան :

Մեկ խօսքով, Չարմանք է որ այս-

պիսի խեղաքիւր սկզբունքներով՝  
ամբարձաւան բռնակալութիւնը  
արիական կառավարութեան տեղ  
դրուի, խարդախութիւնը խոհեմու-  
թեան տեղ, կծծութիւնը կամաւոր  
աղքատութեան տեղ, արհամարհո-  
տութիւնը համբերութեան տեղ, ծնո-  
ղաց դէմ անողորմութիւնը անձնու-  
րացութեան տեղ, իրարու դէմ դա-  
ւաճանութիւնը հասարակասիրու-  
թեան տեղ, ազգին իրաւունքը օտա-  
րաց մասնէը ազգասիրութեան տեղ,  
եւ զլուխ ամենայնի՛ փարիսական  
կեղծաւորութիւնը կրօնաւորական  
բարեպաշտութեան տեղ :

Ո՛հ, ասոնց ամենն ալ տեսանք  
մենք Միսիբարեան միաբանութեան  
մեջ, եւ երկար ասեն խաբուէցանք՝

մտքերնիս դնելով թե ամենն այլ մասնաւորաց պակասութիւններ են , որովհետեւ կըսեսնեիմք նաեւ այս պակասութիւններէն ազատ մնացած անձիմք : Չեիմք մտածեր թէ այնպիսի ոգւով եւ ընթացիւք վարուող միաբանութեան մեջ աւելի զգարմանայի պիտի ըլլար այն պակասութիւնները չունեցողը քան թէ անոնցմէ այլ աւելին ունեցողները :

Մեզի պէս կըխաբուին նաեւ անոնք որ միաբանութենէն չեն զատուած , եւ բարեմտութեամբ կաշխատին իրենց պարտք ճանչցածնին կատարելու . ուստի թող չզգարմանան ընթերցողք թէ ինչպէս կըլլայ որ դեռ կըզտնուին այն պակասութիւններէն ազատ մարդիկ որ միաբանու-

թենեն ալ ջեն զասուիր : Յայսնի  
բան է որ անոնցմէ ոմանք ալ լաւա-  
գոյն օրեր տեսնելու յուսով կը համ-  
բերեն, եւ ոմանք յուսահասութեամբ  
անհոգութեան զարնելով՝ իրենց  
հոգւոյն փրկութեանը, այս ինքն  
խիղճերնուն հանգսութեանը կը-  
նային :

Ահա այսպիսի պատճառներով  
մենք ալ քանի որ նոյն միաբանու-  
թեան մէջ էինք, եւ մտքերնիս պա-  
շարուած էր, բարեմտութիւննիս  
շատ, փորձառութիւննիս քիչ, կա-  
մայ եւ ակամայ շատ մը պակասու-  
թիւններ ոչ միայն ջէինք տեսնել,  
այլ եւ գուցէ երբեմն աղեկութեան  
տեղ անգամ կը դնէինք : Իսկ երբոր  
շատ տարիներով, շատ փորձերով,

շատ դիպուածներու մեջ յայտնապէս  
տեսանք որ ասէն ասէն ունեցած  
կասկածնիս իրաւ էն եղեր, — երբ  
տեսանք որ վերոյիշեալ սկզբունքնե-  
րով կառավարուող միաբանութեան  
մը հոգին որչափ ալ աղէկ ըլլայ,  
եւ ընթացքը որչափ ալ ուղիղ երեւ-  
նայ՝ վնասակար է իրեն եւ ազգիս  
միանգամայն, — երբ տեսանք որ  
հռովմեական ու ճիգվիթական ճամ-  
բաներու մեջ մտնելով որչափ հեռա-  
ցեր է միաբանութիւնը սուրբ Աւե-  
սարանին սկզբունքներէն, եւ նախ-  
նի հարց մերոց երանելեաց յուսա-  
ւոր՝ պարզ էւ անխարդախ ճանա-  
պարհէն, — փոխեցինք կարծիքնիս,  
եւ գատուեցանք էլանք միաբանու-  
թենէն :

Անով գոն կըլլայինք անշուշտ.  
Եւ որչափ ալ բամբասուիներ ու հա-  
լածուիներ մեր հին կրօնակիցներէն  
ուղղակի եւ անուղղակի՝ իբրեւ  
ապստամբ, խռովարար, մոլորե-  
ցուցիչ եւ հերձուածող, չխմանալու  
կըզարնէինք, ու « Տեր, թող դոցա,  
զի ոչ գիտեն զինչ գործեն » ըսելով՝  
մինչեւ ի սպառ կըլլուէինք ու մեր  
խղճին ուղղութեանը կըհետեւէինք.  
սակայն ազգիս օգտին համար հար-  
կաւոր ճանչցանք այս ուրուագիծը  
հրատարակել. եւ յուսանք թէ մեր  
գովելի դիտաւորութեանը կըհաս-  
նինք, որ է՝ թիւր սկզբանց կարողի-  
կութեան եւ ճիշդիթութեան վնաս-  
ները ցուցընել՝ առանց մեկուն մե-

կալիս անձնական պակասութիւնները հրապարակելու :

Երանի թէ մեր բազմամեայ եւ բազմասագնապ փորձառութենէն իրաս առնուն նաեւ Մխիթարեան միաբանութեան այժմու անդամները, եւ առանց մեր կրած նեղութիւնները իրենք ալ կրելու՝ վերցընեն էրէ կրնան անոր այն երկու մեծամեծ պակասութիւնները, որպէս զի աղէկութիւններէն ալ աւելի օգուտ տեսնէ ազգերնիս . Այն ասէն մենք ալ կըմխիթարուինք եւ կուրախանանք որ այս փորձիկ գրուածքով մեծ ծառայութիւն մը ըրած էղանք Ազգիս եւ իրենց :








## ՅԱՆԿ



Նախնական ոգի Մխիթարեան միա- բանութեան . . . . .	15
Յեղափոխութիւն ոգւոյ Մխիթա- րեան միաբանութեան . . . . .	26
Յեղափոխութիւն ընթացից Մխիթա- րեան միաբանութեան . . . . .	71
Անուղիղ դաստիարակութիւն ուսա- նողաց եւ նորընծայից . . . . .	79
Կոյր հնազանդութիւն . . . . .	105
Պարսաւելի հասարակասիրութիւն . . . . .	109
Անճանաչողութիւն արդեանց . . . . .	116

[ 22 ]

ժլատ աղբատութիւն . . . . .	125
Մշտնջենաւոր իշխանութիւն աբ- բային . . . . .	128
Քանի մը սկզբունք Մխիբարեան միաբանութեան . . . . .	152
Վերջաբան . . . . .	146



17  
18  
19  
20  
21

...  
...  
...  
...  
...

